

«ՎԻ-ԷՅՋ-ԷՍ» ՍՊԸ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ, Գ. ՊՈՌՇՅԱՆ,

Գ. ԶԱՌԻՇԻ ԽՃՈՒՂԻ 1/72 ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵՈՒՄ

ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ

ՇՄԱԳ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

լրամշակված



Handwritten signature in blue ink.

«ՎԻ-ԷՅՋ-ԷՍ» ՍՊԸ տնօրեն

Ֆրից Շառոյան

Բովանդակություն

	Էջ
1. Ընդհանուր տեղեկատվություն	5
2. Հավելվածներ.....	5
3. Գնահատման հաշվետվության կազմման իրավական հիմքերը.....	6
4. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացների վերաբերյալ	8
5. Նախաձեռնողի անվանումը, գործունեության գտնվելու վայրը, իրականացման նպատակը.....	9
6. Գնահատման հաշվետվության մշակման հիմքերը.....	9
7. Նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների բնութագիրը.....	10
7.1 Գործունեության իրականացման ենթակա տարածք.....	10
8. Շրջակա միջավայրի բնութագրերը	14
8.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը	14
8.2. Սելամիկա և երկրաբանություն	15
8.3. Կլիմա և օդային ավազան.....	16
8.4. Հողային ռեսուրսներ.....	20
8.5. Ջրային ռեսուրսներ	22
8.6. Կենսաբազմազանություն	24
8.7. Հատուկ պահպանվող տարածքներ.....	27
8.8. Պատմության և մշակութային հուշարձաններ.....	27
8.9. Բնության հուշարձաններ.....	29
8.10. Սոցիալ-տնտեսական	29
9. Նախատեսվող գործունեության բնութագիր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները, օգտագործվող բնական ռեսուրսներ և նյութեր, (շինարարության շահագործման , փակման փուլեր) ..	31
9.1. Շինարարության փուլ.....	31
9.2. Շինարարության իրականացման ժամանակացույցը	37
9.3 Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր.....	39
9.5. Նոր կառուցվող շենքի տեխնիկա-տնտեսական ցուցանիշները և լուծումները	40
10. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, ռիսկերը	47
(շինարարության և շահագործման փուլ).....	47
10.1. Օդային ավազան	47
10.2. Հողային ռեսուրսներ.....	48
10.3. Ջրային ռեսուրսներ	49
10.4. Կենսաբազմազանություն	49

10.5. Թափոններ.	49
10.6. Պատմամշակութային և բնության հուշարձաններ.	50
10.7 Աղմուկ և թրթռում.	51
10.8 Արտակարգ իրավիճակներ.	51
10.9. Մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները, ռիսկերը.	52
(Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն).	52
Սոցիալական գործոններ.	52
Շինարարության ընթացքում բացվելու են նոր աշխատատեղեր: Շինարարության փուլում առավելագույն հերթափոխում աշխատելու է 81 մարդ, որից` 76 բանվոր, 5-ը ինժեներատեխնիկական անձնակազմ: Աշխատելու են 6 օր` 8 ժամյա հերթափոխային գրաֆիկով:.....	52
Շինարարության ընթացքում բնակիչների իրավունքների սահմանափակում կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ կարգի խախտում չի նախատեսվում:.....	52
10.10 Լանդշաֆտ.	52
10.11 Բարեկարգում և Կանաչապատում.....	52
11.Շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումները(Բնապահպանական կառավարման պլան)	52
11.1. Օդային ավազան.	53
11.2. Հողային ռեսուրսներ.	54
11.3. Ջրային ռեսուրսներ.	55
11.4. Կենսաբազմազանություն.....	55
11.5. Թափոններ.	56
11.6. Պատմամշակութային և բնության հուշարձաններ.	56
11.7. Աղմուկ և թրթռում.	56
11.8. Արտակարգ իրավիճակներ.	57
11.9. Մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները, ռիսկերը.	58
(Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն).....	58
11.10.Սոցիալական գործոններ.	59
11.11. Էներգախնայողություն և Էներգաարդյունավետություն.....	59
11.12. Լանդշաֆտ.	60
11.13. Բարեկարգում և Կանաչապատում.....	60
12. Նախատեսվող գործունեության ազդեցության մշտադիտարկման ծրագիրը.....	60
(Մոնիթորինգ).....	60
13.Բողոքների ընթացակարգ.....	61
14. Բնապահպանական միջոցառումների.....	61
(բնապահպանական կառավարման) պլան.....	61

15. Մշտադիտարկման (մոնիթորինգի) միջոցառումներ.....	80
16. Հանրային քննարկումներ	86
Գրականություն	86

1. Ընդհանուր տեղեկատվություն

Հաշվետվություն	Կոտայքի մարզի Նաիրի համայնքի, Գ. Պողոսյան, Գ. Չաուշի խճուղի 1/72 հողամաս հասցեում բնակելի համալիրի կառուցում:
Նախաձեռնող	«ՎԻ-ԷՅՁ-ԷՍ» ՍՊԸ
Ձեռնարկողի իրավաբանական հասցեն	ք. Երևան 0015, Սուրբ Գրիգոր Լուսավորչի փողոց /Ծ/ 6/1 19 բնակարան:
Ձեռնարկողի փաստացի գործունեության տարածք	Կոտայքի մարզի Նաիրի համայնքի, Գ. Պողոսյան, Գ. Չաուշի խճուղի հ. 1/72 հողամասեր
Ձեռնարկողի հեռախոս, էլեկտրոնային փոստ	Harout Charoyan h.charoyan@umt.cc , 095666682
Աշխատանքային նախագծի մշակող	«Արխիմոդուլ» ՍՊԸ
Գնահատման հաշվետվության մշակող	«Նովալ» ՍՊԸ
Հաշվետվության մշակող ընկերության հասցե, հեռախոս, էլեկտրոնային փոստ	Ք. Երևան, Իսահակյան 18 (093)39-77-60 noval.llc.noval@gmail.com

2. Հավելվածներ

- Հավելված 1.** Տարածքի սեփականության իրավունքի վկայականները, պետական ռեգիստրը
- Հավելված 2.** Ճարտարապետա-հատակագծային առաջադրանք
- Հավելված 3.** Տարածքի կադաստրային քարտեզը, կոորդինատները
- Հավելված 4.** Տարածքի գլխավոր հատակագիծը
- Հավելված 5** Կանաչապատման նախագիծ
- Հավելված 6.** Կոտայքի մարզի Բնության հուշարձանների ցանկը
- Հավելված 7.** Պատմամշակութային և հնագիտական հուշարձանների եզրակացություն:
- Հավելված 8.** Համայնքի նախնական համաձայնությունը
- Հավելված 9.** Հանրային քննարկման արձանագրություն, մասնակիցների ցանկ, լսման նկարներ, թերթի հայտարարություն
- Հավելված 10.** Արտանետումների հաշվարկները և աղմուկի մակարդակի գնահատում
- Հավելված 11.** Պետական տուրքի անդորրագիրը

3. Գնահատման հաշվետվության կազմման իրավական հիմքերը

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենք- Կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 2 կատեգորիա՝ «Ա», «Բ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ՀՀ օրենք («Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ՀՕ-121-Ն (ընդունված 1994թ. և լրամշակված 2022թ.)- կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

«Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.) -Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններն են՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.)-Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.)-Սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց

պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001թ.) - Սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպատիրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004 թ.)-սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը:

«ՀՀ ջրային օրենսգիրք» (2002) - Նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումն է:

«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ.)- Սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998)-կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը:

«Քաղաքաշինության Բնագավառում Իրավախախտումների Համար պատասխանատվության մասին» ՀՀ Օրենքը (28 ապրիլի 1999թ.) -Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության ենթարկելու իրավական հիմքերը՝ քաղաքաշինական գործունեության բոլոր փուլերում քաղաքացիների, հասարակության ու պետության շահերը պաշտպանելու, օրենսդրական ակտերի, ստանդարտների ու կանոնների պահանջների կատարումն ապահովելու նպատակով:

ՀՀ կառավարության որոշումներ.

- ❖ **ՀՀ կառավարության 28** դեկտեմբերի 2023 թվականի «Հայաստանի հանրապետության կառավարության 2014թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2343 - Ն որոշում:
- ❖ **ՀՀ կառավարության 29 հունվարի 2010թ.** «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» N72-Ն որոշում:

- ❖ **ՀՀ կառավարության 29 հունվարի 2010թ.**՝ «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N71-Ն որոշում:
- ❖ **ՀՀ կառավարության 31.07.2014թ.**՝ ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշում:
- ❖ **ՀՀ կառավարության 8 սեպտեմբերի 2011թ.** «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-Ի N 1622-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2001 թվականի ապրիլի 12-Ի N 286-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N1396-Ն որոշում:
- ❖ **ՀՀ կառավարության 14 օգոստոսի 2008թ.** «Հայաստանի հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում:
- ❖ **ՀՀ կառավարության 15 մարտի 2007թ.** «ՀՀ Պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» N 385-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության թվականի 14 սեպտեմբերի 2006թ. «Թափոնների հաշվառման, գոյացման, հեռացման (ոչնչացման, վնասագերծման, տեղադրման) և օգտահանման կարգը սահմանելու մասին» N 1343-Ն որոշում:
- ❖ **ՀՀ կառավարության 12 ապրիլի 2018թ.** «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» N426-Ն որոշում:

4. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացների վերաբերյալ

Հայաստանում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝ համաձայն: Գործունեություն, որը կարող է ունենալ ազդեցություն շրջակա միջավայրի վրա, մինչև իրականացումը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության:

Համաձայն Օրենքի՝ գործունեությունները դասակարգվում են 2 կատեգորիաների՝ Ա և Բ: Համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա ենթակետի Քաղաքաշինության բնագավառում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա են. «Քաղաքաշինական գործունեության օբյեկտների կառուցում՝ 1500 քմ և ավելի, վերգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով կամ 2000 քմ և ավելի ստորգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով»:

Համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա ենթակետի՝ սույն նախատեսվող գործունեությունը ներառված է Բ կատեգորիայի մեջ և շրջակա միջավայրի գնահատման և փորձաքննության է ենթակա Բ կատեգորիայի ընթացակարգով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, նախատեսել համապատասխան միջոցառումներ՝ հնարավոր բացասական ազդեցությունները նվազագույնի հասցնելուն կամ բացառելուն ուղղված: Գնահատման հաշվետվություն կազմվել է հիմք ընդունելով նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը, նախատեսվող գործունեության տարածքի ուսումնասիրության ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը, տարածքի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները, քարտեզները, լուսանկարները և այլ փաստաթղթեր:

5. Նախաձեռնողի անվանումը, գործունեության գտնվելու վայրը, իրականացման նպատակը

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է «ՎԻ-ԷՅՁ-ԷՍ» ՍՊԸ-ի՝ կողմից, որի իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան 0015, Սուրբ Գրիգոր Լուսավորչի փողոց /Շ/ 6/1 19 բնակարան::

Նախատեսվող գործունեության նպատակը. «ՎԻ-ԷՅՁ-ԷՍ» ՓԲԸ-ի՝ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Գ. Պոռոշյան, Գ. Չաուշի խճուղի 1/72 հասցեում, բազմաբնակարան բնակելի շենքի կառուցում (վերգետնյա հարկեր՝ 8 եվ 1 նահանջ հարկ, ստորգետնյա հարկեր՝ 2): Բազմաբնակարան շենքը /ներառյալ ստորգետնյա հարկեր/ 32550 ք.մ/ է: Կառուցապատման նախագիծը կազմվել է՝ համաձայն Նաիրի համայնքի կողմից տրված նախագծման թույլտվության: Նախագծերը համապատասխանում են ՀՀ գործող նորմերին և տեխնիկական նորմատիվային փաստաթղթերի պահանջներին:

Նախնական փուլում «ՎԻ-ԷՅՁ-ԷՍ» ՍՊԸ նախատեսել էր 0.12213 հա մակերեսով հարակից Գ. Չաուշի խճուղի 145 հասցեում գտնվող տարածքը, որը հարում է Երևան Աշտարակ մայրուղուն և ներառել նախատեսվող գործունեության մեջ:

Նկատի ունենալով համայնքի կողմից տրամադրված տեխնիկական պայմանը գործունեությունը իրականացվելու է միայն Գ. Չաուշի խճուղի 1/72 հասցեում: Նշված հանգամանքից ելնելով Պատմա-մշակութային ուսումնասիրությունները, ինչպես նաև հանրային քննարկումները ներառել են նաև հարակից տարածքը, հանրությանը առավել ամբողջական պատկերացում տալու նախատեսվող գործունեության տարածքի, ինչպես նաև հարակից տարածքի պատմամշակութային արժեքների վերաբերյալ:

Գործունեության ենթակա տարածքի հողի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

6. Գնահատման հաշվետվության մշակման հիմքերը

«ՎԻ-ԷՅՁ-ԷՍ» ՓԲԸ-ի՝ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Գ. Պոռոշյան, Գ. Չաուշի խճուղի 1/72 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման հաշվետվության մշակման համար հիմք են հանդիսացել.

- կառուցապատման նախագծային փաստաթղթերը,
- համալիրի տեղամասի ինժինեռակերպաբանական հետազոտությունների հաշվետվությունը,

- համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները,
- սեփականության վկայական` N 07082024-07-0137:
- ճարտարապետահատակագծային առաջադրանք` N ՆԹ-5459-26 տրված` 30.04.2026թ:
Հավելված 2

7. Նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության տարածքի, այդ թվում` շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների բնութագիրը.

7.1 Գործունեության իրականացման ենթակա տարածք.

Կառուցապատման ենթակա տարածքը գտնվում է Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Պոռոշյան գյուղական բնակավայրի վարչական տարածքում, իրավունքի տեսակը` ընդհանուր սեփականություն, հողի նպատակային նշանակությունը բնակավայրի է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը` հասարակական կառուցապատման: Կից գտնվում են հասարակական կառուցապատման տարածքներ, գյուղատնտեսական նշանակության հողատարածքներ:

Երկրաբանական և երկրաձևաբանական տեսանկյունից հայցվող տարածքն իրենից ներկայացնում է Արագածի հարավ-արևելյան և Արալի լեռան հարավ-արևմտյան լանջերին տարածվող Արարատյան գոգավորության մի հատված, որտեղ լայն տարածում ունեն չորրորդական երկրաբանական դարաշրջանի հրաբխային և լճային-այրուվիալ ծագում ունեցող գոյացությունները` ներկայացված տեղ-տեղ մերկացող բազալտային և տուֆային ապարներով, ավազակավերով և կավավազներով, որոնք ծածկված են հողոցենի լանջային, ինչպես նաև այրուվիալ-պրոլուվիալ նստվածքներով և ծովի մակերևույթից, գտնվում են միջինում 990-1020 մ բարձրության վրա: Ընդհանուր առմամբ, տարածքն ունի թույլ, ոչ բարձր բլուրներով կտրատված ռելիեֆ: Տարածքը տարբեր ժամանակներում ենթարկվել է որոշ փոփոխությունների տեղ-տեղ փորվել և հարթեցվել է հետագայում կառուցապատում իրականացնելու համար: Գործունեության տարածքում բացակայում են պատմամշակութային և բնության հուշարձանները: Կից գտնվում են հասարակական շինություններ, բնակելի տներ, թաղամասեր, Երևան-Աշտարակ մայրուղին, «Կովկաս-Ռեստորանային» համալիրը, հասարակական նշանակության տարածքներ:



Տարածքը տեղակայված է Երևան Աշտարակ ավտոճանապարհի հարակից տարածքում: Հ-7 հանրապետական ավտոճանապարհից՝ մոտ 5 կմ, Տեղական ավտոճանապարհից 820մ , բնակավայրից 125 մ, Հրազդան գետից՝ 5.3 կմ, «Թագավորանիստ» խարամային կոն երկրաբանական հուշարձանից՝ 6.4 կմ:

«ԳԵՈՌԵՍԵՐՉ» ՍՊԸ-ի կողմից 2026թ. ապրիլ ամսվա ընթացքում կատարվել են նախատեսվող գործունեության տարածքի ինժեներա-երկրաբանական ուսումնասիրությունների գնահատման աշխատանքներ: Կատարվել է տարածքի ինժեներաերկրաբանական տեղագնում, 7 հորատանցքերի հորատում, նախկինում կատարված տարբեր ուսումնասիրության նյութերի հավաքում, ամփոփում, եզրակացության կազմում:



Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը տեղադրված է Եղվարդ-Քասախ հրաբխային սարավանդի սահմաններում, նրա հարավ-արևմտյան մասում, Էռզիոնահողմահարման լանջերի վրա: Մակերեսը հարթ է: Հտազտվող տարածքը գտնվում է մեղմ թեքությամբ տարածքում՝ 1159-1166.0 մ բարձրության վրա:

Ջրային ցանցը տարածաշրջանում քիչ է զարգացած, հիմնական ջրային երակը Քասախ գետն է, որի ռեժիմը կարգավորված է մանր ջրահոսքերով և ջրանցքներով, հիդրոտեխնիկական կառույցներով:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքում առկա են Նեոգեն Չորրորդական հասակի հրաբխային առաջացումների չստորաբաժանված համախմբերի հետ կապված ստորգետնյա ջրեր, որոնք պատկանում են միջլավային և լավատակի ջրերի տարատեսակներին: Գրունտային ջրերն ըստ հորատանցքերի՝ մինչև 25.0մետր խորությամբ չեն բացահայտվել, համաձայն ֆոնդային նյութերի դրանք տեղադրված են 50.0 մետրից խորը: սակայն մակերեսային ջրերը ներթափանցելով գրունտային զանգվածների խորը տեղադրված շերտերի մեջ, կուտակվելով հրաբխային առաջացումների պոլիռեկլիեֆի/փոս ընկած/, ճկված, խորդուբորդությունների մասերում, կարող են առաջացնել «թաքնված» ջրափոսեր, ջրակալված և խոնավացած տեղամասեր/վերնաջրեր/:

Կլիմա. Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթղթի՝ ուսումնասիրվող տարածքը գտնվում է չափավոր կլիմայական գոտում: Տեղամասն ունի չոր, մայրցամաքային կլիմա, որին նպաստում է աշխարհագրական դիրքը, ռելիեֆի առանձնահատկությունները: Օդի բացարձակ

առավելագույն ջերմաստիճանը հասնում է 41°C/հուլիս, օգոստոս ամիսներ/, օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը հասնում է -29°C/հունվար, փետրվար ամիսներ/, տարեկան մթնոլորտային տեղումների միջին քանակը կազմում է 368մմ, օդի տարեկան միջին հարաբերական խոնավությունը կազմում է 61%, գերակշռում են հյուս-արևելյան և հարավ-արևմտյան քամիները՝ 1.8մ/վրկ միջին արագությամբ, գրունտի սառեցման խորությունը կազմում է 75 սմ:

Երկրաբանական կառուցվածքը. Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են միոցեն-օլիգոցենի հասակի հայկական բարձրավանդակի հրաբխային հատույթի դոլերիտային և օլիվինային բազալտները, անդեզիտա-դազիտները, մասամբ տուֆաբրեկչիաները, տուֆերը, որոնք վերադրված են վերին չորրորդականի հասակի լավաները՝ բազալտներ, անդեզիտաբազալտներ, հրաբխային խարամներ, ավազներ և պեմզաներ: Վերջիններս իրենց հերթին ստորադրված են ժամանակակից առաջացումներին: Տարածքի երկրաբանական առաջացումների էյուվիալ-պրոյուվիալ և էյուվիալ ծագման կավային, ավազային և խոշորաբեկորային կազմի գրունտների շերտերով:

Հորատման աշխատանքերի ընթացքում՝ մինչև 25մ խորությամբ փորված հորատանցքերում բացահայտվել են վերոհիշյալ բոլոր գրունտները:

Շրջանը սեյսմա-տեկտոնական տեսակետից շրջանը տեղադրված է Հայաստանի ծալքավոր գոտում Վերին ալպիական ծալքավորման մարզի Արագածի վերադրված ճկվածքի սահմաններում, համարվում է հայկական բարձրավանդակի ամենանասեյսմակալիվ գոտիներից մեկը:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ բացակայում են:

Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը. հետազոտությունների արդյունքում տեղամասում առանձնացվել են գրունտների հետևյալ շերտերը.

Շերտ- թիվ 1 լիցքային գրունտ/հողաբուսական ծածկույթ/ չպառակապնդված, խճամանրախճային կազմի, հազվադեպ հանդիպող մեծաբեկորներով, կավային և ավազային նյութի խառնուրդով՝ մինչև 30% , շինարարական, տեղ-տեղ կենցաղային թափոններով, տարածումը համատարած, հզորությունը՝ 0.2-0.5մ:

Տեխնածին առաջացումներ.

Շերտ- թիվ 2 կարբոնատային կեղև, խճա-մանրախճային, հազվադեպ մեծաբեկորներով, հրաբխային ապարներից և քոեճից, կավաավազային և փոշենման ավազի լցանյութով, մինչև 30%, փոշենման ավազի նրբաշերտերով, գրունտը ցեմենտացած է, կցանյութը՝ սակավախոնավ, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0.6-1.0մ:

Չորրորդական հասակի էյուվալ-պրոյուվալ առաջացումներ.

Շերտ թիվ 3 կավաավազ մանրախճային, դարչնագույն, մասամբ դեղնավուն երանգով, փոշենման ավազային գրունտների ենթաշերտերով և ոսպնյակներով, խճի և բեկորների պարունակությամբ մինչև 5 %, միջին խտության, փուխր, սակախոնավ, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0.6-0.8մ:

Չորրորդական հասակի էյուվալ-պրոյուվալ առաջացումներ.

Շերտ թիվ 4 խճա-մեծաբեկորային գրունտ, խարամացած բազալտներից, միջբեկորային կավաավազային և խարամավազային լցանյութով մինչև 20 %, տեղ-տեղ մանրախճի և տարահատիկ ավազների բներով և ոսպնյակներով, մասամբ ջարդոտված խճի աստիճանի, գրունտը միջին խտության է, լցանյութը՝ սակավախոնավ, տարածումը համատարած է, հզորությունը՝ 1.0-2.0մ:

Չորրորդական հասակի էյուվալ-պրոյուվալ առաջացումներ.

Շերտ թիվ 5 բազալտ, անդեզիտա-բազալտ, մոխրագույն, ծակոտկեն և թույլ ճեղքավորված, մասամբ ջարդոտված, երբեմն մեծաբեկորների և խճի աստիճանի, ամուր, արմատական տեղադրմամբ, տարածումը համատարած է, հզորությունը՝ 20.0մ:

Նեոգեն չորրորդական հասակի հրաբխային առաջացումներ.

Շերտ թիվ 6 խարամ հրաբխային խճա-մանրախճային կազմի, մասամբ մանրախճային և ավազային կազմի, տեղ-տեղ կավաավազային լցանյութով մինչև 10 %, խարամացած, շեղջաքարացած բազալտների կտորներով, գրունտը միջին խորության է, լցանյութը՝ սակախոնավ, տարածումը սահմանափակ է, հզորությունը՝ 0.5-1.0մ:

Նեոգեն չորրորդական հասակի հրաբխային առաջացումներ:

Գրունտների ֆիզիկա-մեխանիկական հատկանիշները. հետազոտության արդյունքերով առանձնացվել են 5 շերտերը՝

-լիցքային գրունտներ/շերտ թիվ 1/, հողաբուսական շերտով:

-Կավային գրունտներ/շերտ թիվ 2/, ներկայացված են բաց դարչնագույն երանգով, կարբոնատացած, սակավախոնավ ավազներով: Կառուցապատման տեսակետից հետաքրքրություն չեն ներկայացնում:

-Խոշորաբեկորային/շերտեր թիվ 3,4,6/, ներկայացված են կարբոնատային կեղևով, խճային, մեծաբեկորային և խարամային գրունտներով:

-Կիսաժայռային և ժայռային գրունտներ/շերտ թիվ 5/, ներկայացված են : Ներկայացված են բազալ, անդեզիտաբազալտներով, ճեղքավորված, մեծաբեկորային, ջարդոտված, մասամբ թույլ խարամացած, տեղնտեղ ջարդոտված խճի , քարակտորների աստիճանի:

Որպես հիմնատակ առաջարկվում է խոշորաբեկորային/շերտ 3/ և ժայռային/շերտ 4/ գրունտները: Տեղամասի լիթոլոգիական կտրվածքն ունի անհամասեռ կազմ հորիզոնական տարածման չպահպանվող պայմաններ, ուստի կառույցի հիմքերի համար առաջարկվում է հիմքերի համատարած սալի տարբերակը:

Շրջանի սեյսմիկ պայմանները. «Գեոտեստ»ՍՊԸ ընկերության կողմից կատարվել է նաև Նարիի համայնքի Պոռոշյան գյուղի Գ. Չաուշի խճ. 1/72 հողամասում նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառույցների հիմնատակների գրունտների սեյսմիկ կարգի գնահատման նպատակով երկրաֆիզիկական հետազոտություններ: Սեյսմիկ զոնավորման եղանակով կատարվել են շենքի հիմնատակի գրունտներում, սեյսմիկ լայնական ալիքների տարածման արագությունների գնահատում՝ գործիքային գրանցումների միջոցով: Համաձայն ստացված արդյունքերի՝ համաձայն նախագծվող շենքի հիմնատակի գրունտները՝ -6 միջից հաշված, 30մ հատվածքի համար, ըստ ՀՀՇՆ 20.04.2020թ.-ի «Երկրաշարժադիմացկուն Շինարարություն, Նախագծման նորմեր» նորմատիվային փաստաթղթի աղյուսակ 3-ի՝ տեղազննվող շրջանը գտնվում է I սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max} = 0.3g$ արագացմամբ:

8. Շրջակա միջավայրի բնութագրերը

8.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը.

Կոտայքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական մասում, ծովի մակերևույթից մոտ 900- 2500մ բարձրության վրա: Տարածքն ընդգրկում է Հրազդան գետի վերին և միջին ավազանը, ինչպես նաև Մարմարիկ գետի ավազանն ամբողջությամբ: Հյուսիսից սահմանափակվում է Գուլթանասար, իսկ հյուսիս-արևելքից՝ Հատիսի լեռնազանգվածներով: Հարավ-արևմուտքում աստիճանաբար ցածրանալով՝ ձուլվում է Արարատյան դաշտին:

Հիմնական լեռնագրական միավորներն են Կոտայքի և Եղվարդի բլրաալիքային

սարավանդները, Մարմարիկի վտակներով կտրտված Փամբակի լեռնաշղթայի լանջերը, Գեղամա լեռնաշղթայի լեռնաճյուղերն ու լավային հոսքերը:

Կոտայքի մարզի բնական պայմաններն ու հարստությունները բազմազան են: Մարզի տարածքն աչքի է ընկնում բարձր լեռնագագաթներով ու խորը կիրճերով, լայնարձակ գետահովիտներով ու մեղմաթեք սարավանդներով, լավաների մեջ գոյացած բազալտե սյունաձև առանձնացումներով՝ անձեռակերտ բազմանիստ պրիզմաների տեսքով:




Հրազդան գետի ձախափնյա հատվածն իրենից ներկայացնում է Գեղամա զանգվածից հոսող լավային հոսքերից առաջացած սարահարթ՝ ծածկված տարբեր բարձրության բլուրներով:

Տարածաշրջանի աշխարհագրական դիրքն ընդհանուր առմամբ նպաստավոր է: Մարզում Գեղամա լեռները կազմող հրաբխային ապարների մեջ ներծծվող ջրերի աղբյուրների տեսքով դուրս են գալիս լեռների ստորոտներում, ինչպես նաև Հրազդան և Ազատ գետերի կիրճերում, որոնցից են Քառասունակնի, Արզնիի և Գառնիի աղբյուրները:

8.2. Մեյամիկա և երկրաբանություն

Շրջանի սեյսմիկ պայմանները. Տարածաշրջանի ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են: Տարածաշրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին-կավիճ, միջին-միոցենի հասակի մետամորֆիզացված բյուրեղացված թերթաքարերը, մարմարային ապարները, չորրորդական հասակի անդեզիտաբազալտներով և անդեզիտադացիտներով լավաները՝ ծածկված կրաքարերով, նստվածքային և հրաբխային ապարներով, ավազային և խոշորաբեկորային գրունտներով:

Շրջանի սեյսմիկ պայմանները. համաձայն ՀՀՇՆ-20.04.2020թ.-ի նորմատիվային փաստաթղթի՝ ըստ սեյսմիկ հատկության տարածաշրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max}=0.4g$ արագացմամբ, 9 և ավելի բալլ սեյսմիկությամբ:



8.3. Կլիմա և օդային ավազան

Գործունեության ենթակա տարածքի կլիմայական բնութագրի համար հիմք է ծառայել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀԾՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը՝ Եղվարդ քաղաքի համար: Ուսումնասիրվող տարածքը գտնվում է չափավոր կլիմայական շրջանում: Տարեկան միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է 9.7°C, օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը՝ 38,7°C, օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝ -32.6°C, օդի հարաբերական միջին տարեկան խոնավությունը՝ 61%, տարեկան միջին մթնոլորտային տեղումների քանակը՝ 445մմ, քամու միջին տարեկան արագությունը 2.6մ/վ, գրունտի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 79սմ, ջեռուցման ժամանակաշրջանի հաշվարկային մեծությունը կազմում է177 օր:

Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ Եղվարդ օդերևութաբանական կայանի տվյալների:

ՕԴԻ ՄԻՋԻՆ ԵՎ ԷՔՍՏՐԵՄԱԼ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ,
ՁՄՈՒԱՆ ՍԿԻՉԲԸ, ՎԵՐՋԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 1 Օդի միջին ջերմաստիճան

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Եղվարդ	-4.9	-2.8	2.7	9.4	14.4	18.9	22.8	22.8	18.6	11.8	4.8	-1.7	9.7	-32.6	38.7

Օդի հարաբերական խոնավությունը (%)
ՕԴԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 10 Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %																	
	ըստ ամիսների													Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Միջին ամսական		Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	
12. Եղվարդ	75	71	65	61	60	53	49	47	49	59	70	76	61	75	66	49	34	

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը
ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐԸ

Աղյուսակ 12 Մթնոլորտային տեղումները

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը _____ միջին ամսական _____ մմ օրական առավելագույն													Տարեկան	Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	ըստ ամիսների															
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր				
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	


12. Եղվարդ	35	36	44	60	64	39	26	13	17	40	35	36	445	186	259
	30	31	42	40	42	29	53	45	35	39	37	28	53		

Քամի

Աղյուսակ 15 Քամի (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, %								Միջին արագությունը, մ/վ	ըստ ուղղությունների	Անբյուրի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Փերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հունիսին, մ/վ	Փերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Միջին արագությունը, մ/վ				ըստ ուղղությունների											
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ-արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-արևմտյան								
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16		
15. Եղվարդ	հունվար	6	48	11	3	15	6	9	2	40	1.1	ՀսԱրլ	5.7	ՀսԱրլ	1.8		
		1.7	1.8	1.7	1.5	1.7	1.9	1.8	1.7								
	ապրիլ	5	48	7	3	17	10	8	2	23	2.6						
		3.0	3.8	2.7	2.4	2.4	2.8	2.7	2.1								
	հուլիս	6	73	4	1	7	4	4	1	11	4.8						
		4.9	5.5	4.9	1.7	3.0	2.5	3.0	1.8								
	հոկտեմբեր	5	55	6	3	16	8	6	1	31	1.9						
		2.7	3.1	2.1	1.9	1.9	2.3	1.8	2.2								

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ
ՇՐՋԱՆԱՑՈՒՄԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**



Օդային ավազան. Հայաստանի հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից՝ հանրապետության տարածքի 45 (այդ թվում՝ 6 դժվարամատչելի և 3 մասնագիտացված) օդերևութաբանական կայանում:

ՀՀ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց



Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը:

Համաձայն «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի մոնիթորինգի դիտարկումներ»-ի բնակավայրերի մթնոլորտային օդի աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների (հնգամյա միջին) մինչև 10 000 բնակիչ ունեցող բնակավայրերի համար, որոնց թվին է պատկանում Պոռոշյան բնակավայրը օդի աղտոտվածության ցուցանիշներն են.

- Փոշի՝ 0.071 մգ/մ³
- Ծծմբի երկօքսիդ (SO₂)՝ 0,006 մգ/մ³
- Ազոտի երկօքսիդ (NO₂)՝ 0,023մգ/մ³
- Ածխածնի օքսիդ (CO)՝ 0.8 մգ/մ³

8.4. Հողային ռեսուրսներ.

Կոտայքի մարզն աչքի է ընկնում իր խայտաբղետ հողաբուսական ծածկույթով: Այստեղ հիմնականում գերակշռում են լեռնատափաստանային և լեռնաշագանակագույն, իսկ բարձրադիր վայրերում տարածված են ենթալպյան լեռնամարգագետնային, սևահողանման ու դարչնագույն հողերը, սարավանդային հատվածներում՝ շագանակագույն հողերը և չոր տափաստանային

լանդշաֆտները: Լեռնալանջերի սևահողային ծածկույթի վրա ձևավորվել են լեռնային տափաստանները:



Կախված ռելիեֆի պայմաններից և էոզոլայի ենթարկվածության աստիճանից՝ հանդիպում են ինչպես ավելի թեթև, այնպես էլ ծանր մեխանիկական կազմով հողեր: Հողերի կլանման տարողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ և թեթև կավավազային մեխանիկական կազմով:

Համաձայն Կաթիլային և անձրևացմամբ ռոտզման նորմերի մշակման Ատլասի՝ կոտայքի մարզում 1400-1500մ բարձրությունների վրա գերիշում են լեռնատափաստանային հատվածները, որոնց հողածածկույթը տիպիկ և մուգ լեռնային շագանակագույն, ինչպես նաև տիպիկ լեռնային սևահողեր են: Ըստ մեխանիկական կազմի՝ միջակ և ծանր կավավազային հողեր են: Հողի խտությունը տատանվում է 1,22-1,25 գ/սմ³ սահմաններում, հողի տեսակարար կշիռը՝ 2,6-2,63 գ/սմ³ սահմաններում: Հողի ծակոտկենությունը՝ 52,4-53,0 %, դաշտային սահմանային խոնավունակությունը՝ 27,7-28,0 % սահմաններում: Իսկ 1500մ բարձրությունների վրա՝ Հողածածկույթը կազմում են կրագերծված լեռնային սևահողերը և սևահողանման լեռնային մարզագետնատափաստանային հողերը: Ըստ մեխանիկական կազմի՝ միջակ և ծանր կավավազային հողեր են: Հողի խտությունը տատանվում է 1,17-1,20 գ/սմ³, սահմաններում, հողի տեսակարար կշիռը՝ 2,51-2,60 գ/սմ³ սահմաններում, հողի ծակոտկենությունը՝ 53,3-53,8 %, դաշտային սահմանային խոնավունակությունը՝ 29,3-32,0% սահմաններում:

Մարդու գործունեության հետևանքով առաջանում է հողային ծածկույթի աղտոտում ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ և այլն) և ցիանական միացություններով ԷՀ առողջապահության նախարարի 2010թ. հունվարի 25-ի «ՀՈՂԻ ՈՐԱԿԻՆ ԵՆՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՇՏՆՁՆԵՐ N 2.1.7.003-10 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N01-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Համաձայն Գլխավոր (www.armmonitoring.am) էլեկտրոնային էջի՝ 2022 թվականի 2-րդ եռամսյակում հողային ծածկույթի՝ ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման դիտարկումներ են իրականացվել նաև Կոտայքի մարզում: Ուսումնասիրված հողերում վանադիումի պարունակությունը գերազանցում է համապատասխան ՄԹԿ-ն՝ 1.5-2.0 անգամ, պղնձի պարունակությունը՝ 17.0-46.3 անգամ, ցինկի պարունակությունը՝ 5.1-12.7 անգամ, քրոմի պարունակությունը՝ 4.3-26.7 անգամ, նիկելի պարունակությունը՝ 9.3-28.0 անգամ, կապարի պարունակությունը՝ 1.3-2.1 անգամ և արսենի պարունակությունը՝ 2.5-10.0 անգամ:

Պոռոչյան բնակավայրի ուսումնասիրվող տարածքում գերակշռում են չորրորդական երկրաբանական դարաշրջանի հրաբխային և լճային-այրովիալ ծագում ունեցող գոյացությունները՝ ներկայացված տեղ-տեղ մերկացող բազալտային և տուֆային ապարներով, ավազակավերով և կավավազներով, որոնք ծածկված են հողոցենի լանջային, ինչպես նաև այրովիալ-այրոլովիալ նստվածքներով:


8.5.Ջրային ռեսուրսներ

Մարզի ջրային ավազանը բավականին հարուստ է: Կոտայքի սարավանդն ընկած է Հրազդան գետի միջին հոսանքի ձախափնյա մասից մինչև Գեղամա լեռների արևմտյան ստորոտը: Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքն (ՋԿՏ) ընդգրկում է 2 հիմնական ջրավազաններ՝ Հրազդան և Քասախ: Հրազդանի ՋԿՏ-ում ընդգրկված են 10 կմ և ավել երկարությամբ 20 գետեր, 1 մլն մ³ և ավելի ծավալով 9 ջրամբարներ, բնական լճեր՝ Քարի և Ակնա, ինչպես նաև 7 առաջնային, 4 դերիվացիոն և 7 երկրորդային ջրանցքներ: Գետի և լճի ջրերը մարզում օգտագործվում են ոռոգման նպատակով: Մարզի տարածքով են հոսում Հրազդան, Մարմարիկ, Մեղրաձոր, Ծաղկաձոր, Դալար, Արջաձոր, ինչպես նաև Գետառ և Ազատ գետերը, Հանքավանի ջրամբարը: Այստեղ են գտնվում նաև 3032 մ բարձրության վրա գտնվող Ակնա լիճը, Սևաբերդի, Մարմարիկի և Ախպարայի ջրամբարները: Մարզը հարուստ է նաև քաղցրահամ ջրերի աղբյուրներով՝ Գառնիի, Կաթնաղբյուրի, Սոլակի, Ալափարսի, Նուռնուսի, Արզականի, Գյումուշի, Մաքրավանի, որոնք խմելու ջրով ապահովում են ոչ միայն մարզի բնակավայրերը, այլ նաև Երևան քաղաքը:

ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 6 գետավազանային կառավարման տարածքների միջոցով:

Հայաստանի հանրապետությունում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացվում է շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Ջրերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման 12.1 հավելվածի համաձայն՝ լճի մակերևույթից և տարբեր խորություններից: Մոնիթորինգն իրականացվում է տարին 2 անգամ՝ 18 դիտակետերում՝ հիմնականում անիոնների և կատիոնների, սնուցող նյութերի և ծանր մետաղների առկայությունը որոշելու համար:

ՀՀ Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը



2025 թվականի 3-րդ եռամսյակում մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի դիտարկումներ իրականացվել են 79 հիդրոլոգիական դիտակետում. այդ թվում՝ 68 գետային, 2 ջրանցքի, 5 ջրամբարային:


Համաձայն Գլխավոր (www.armmonitring.am) էլեկտրոնային էջի՝ 2025 թվականի 3-րդ եռամսյակում կատարված հիդրոլոգիական դիտարկումների՝ Հրազդանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 20 դիտակետում:

Քասախ գետի ջրի որակը Ապարան քաղաքից վերև հուլիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), օգոստոսին՝ «միջակ» (3-րդ դաս), Ապարան քաղաքից ներքև՝ հուլիսին և օգոստոսին՝ «վատ» (5-րդ դաս), Աշտարակ քաղաքից վերև և ներքև հատվածներում ջրի որակը հուլիսին և օգոստոսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանի հատվածում ջրի որակը հուլիսին և օգոստոսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Գեղարոտ գետի ջրի որակը Արագած գյուղից վերև հատվածում հուլիսին և օգոստոսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ հուլիսին՝ «վատ» (5-րդ դաս): Շաղվարդ գետի ջրի որակը Փարպի գյուղից ներքև հատվածում հուլիսին և օգոստոսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Հրազդան գետի ջրի որակը Գեղամավան գյուղի մոտ հատվածում օգոստոսին և սեպտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Քաղսի գյուղից ներքև և Արգել գյուղից ներքև հատվածներում երեք ամիսների ընթացքում՝ «միջակ» (3-րդ դաս), Արգնի ՀԷԿ-ից վերև հատվածում ջրի որակը հուլիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս), սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս), Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

8.6. Կենսաբազմազություն.

Նախատեսվող գործունեության տարածաշրջանը բուսաշխարհագրական տեսակետից պատկանում է Հայաստանի Հանրապետության Երևանի ֆլորիստիկ շրջանին (Թախտաջյան, 1978): Բուսականության հիմնական տիպը լեռնատափաստանն է: Հողերի մշակումը, դաշտապաշտպան անտառաշերտերի ստեղծումը, խոտհարքերը, նաև հրդեհները բացասաբար են ազդում հանրապետության բուսածածկույթի և կենդանական աշխարհի վրա:

Տարածաշրջանում գերակշռում են կիսաանապատային, լեռնատափաստանային լանդշաֆտները՝ համապատասխան տափաստանային, նոսրանտառային, անտառային և մարգագետնային բուսականության տիպերով և վերջիններիս բնորոշ կենդանական աշխարհով:



Բուսական աշխարհ:

Տարածաշրջանի անտառային Էկոհամակարգերին բնորոշ են կաղնուտային, բոխուտային լայնատերև խառը անտառները ու հետանտառային նոսրանտառները: Այստեղ աճում են Կաղնի խոշորատերթ (Quercus macranthera), բոխի (Carpinus betulus), բոխու տեսակներ (Aser campestre, Aser trautvetteri), արոսենի (Sorbus umbelata) և այլ՝ հացենի, թխկի, լորենի, սոճի, թեղի, ալոճենի, մաարենի, հաղարջենի, ազնվամորի և այլ ծառաթփային բուսատեսակներ: Քաղաքին հարակից անտառներում հանդիպում են նաև վայրի տանձենի (Pyrus sp., P. georgica, P. communis) և խնձորենի (Malus silvestres): Կանաչապատ տարածքներում հանդիպում են

եղևնի, նոճի, արևմտյան գիհի, կենսածառ արևելյան, սպիտակ/ լացող ուռենիներ, հացենի, լորենի: Թփուտներից տարածված են յասամանը, հաղարջը, նեղտերև փշատենի և այլն: Փամբակի և Ծաղկունյաց լեռների լանջերին տարածված են թխկու, կաղնու, արոսենու անտառները:

Տարածաշրջանի բուսականությունը հիմնականում լեռնատափաստանային տարախոտեր են, հացազգիների գերակշռությամբ՝ ոզնախոտ(*Dactylis Woronovii*), սեզ տափաստանային (*Phleum phleoides*), դաշտավուկ սոխուկավոր (*Poa bulbosa*), կելերիա սանրաձև (*Koeleris cristata*), ցորնուկ ցցամազ (*Bromus squarrosus*), շյուղախոտ ակոսավոր (*Festuca sulcata*), մերձալպյան բարձրախոտերից՝ իշաովույտ նեապոլիտական (*Melilotus neapolitanus*), եղինջ երկտուն (*Urtica dioica*), ծվծվուկ կտրուված (*Silene multifida*) և այլն:

Նկար 9



Կոտայքի մարզում աճում են 54 տեսակի բույսեր, որոնք գրանցված են ՀՀ բույսերի Կարմիր գրքում: Կոտայքի մարզի և տարածաշրջանի ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներից են՝ ճավշիր պարսկական (*Oropanax persicus* Boiss). ճարտարուկ Արարատի (*Draba araratica* Rupr), ճարտարուկ խոզնավոր(*Draba hispida* Willd), Էվնոմիա կլորատերև (*Eunomia rotundifolia* C. A. Mey.), Ջրահարս փոքր (*Najas minor*), Աղածաղիկ Կուլպական (*Halanthium kulpianum* (K. Koch Bunge), Երնջակա Վանատուրի(*Eryngium wanaturii* Woronow), ոզնաթուփ վարսակային (*Acantholimon avenaceum*), Տերեփուկ Թախտաջյանի (*Centaurea Takhtajanii*) և այլն: ՀՀ կարմիր գրքում ներառվել է նաև Գառնավույտ լազիստանյան- *Oxytropis lazica* Boiss տեսակը: Կատեգորիա. EN B 1 ab(i,ii,iii) +2ab(i,ii,iii), վտանգված տեսակ է, տարածման և բնակության շրջանների մակերեսը 500քառ. Կմ-ից պակաս է: Արեալը խիստ

մասնատված է: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգծված էր 3 կարգավիճակով՝ կրճատվող տեսակ: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգծված չէ:



Ճավշիր պարսկական

Կենդանական աշխարհ: տարածաշրջանի կենդանական աշխարհին բնորոշ են անողնաշարավորների՝ միջատների, բզեզների, մորեխների տեսակային բազմազանությունը: Ողնաշարավոր կենդանիներից հանդիպում են կրիաներ, օձեր, մողեսներ, թռչուններից՝ սև անգղ, կեռնեխ, արտույտ, կաքավ, ծիծեռնակ, ճանճորսներ և այլն, կաթնասուններից՝ եղջերուն, գայլը, գորշ արջ, վայրի խոզ, աղվես, աքիս, կզաքիս, չղջիկներ և այլն:

Կոտայքի մարզում ՀՀ Կարմիր գրքում գրանցված են անողնաշար կենդանիների՝ 62, ողնաշարավոր կենդանիների 28 տեսակներ:

Հրազդան գետի ակունքներում գտնվում է ՀՀ Կենդանիների Կարմիր գրքում գրանցված Հարթ խխունջը(*Gyraulus laevis*):

Կոտայքի մարզում ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներից են՝ Մորեխ հայկականը(*Gomphocerus armeniacu*, Հաստածղրիդ լայնացած (*Bradyporus dilatatus*), Թամբակուրծք թարախահան(*Mylabris sedilithorax* Sumakovt սևամարմին (*Cylindronotus erivanus*), ապոլոն (*Parnassius apollo kashtshenkoi* Sheljuzhko), Աֆրիկյան փրոթերեբիա(*Proterebia afra hyrcana*), Ալեքսանդր երկարաչափ թիթեռ (*Eupithecia alexandriana* Wardikian), Ռավազինի մրջյուն(*Myrmica ravasinii* Finzi), Հայկական իծ(*Viperaa* (*Montivipera*): Թռչուններից՝ գառնանգղ(*Gypaetus barbatus* Linnaeus), Գիշանգղ(*Neophron percnopterus* Linnaeus), Օձակեր արծիվ(*Circaetus gallicus*), Տափաստանային արծիվ(*Aquila nipalensis orientalis* Hodgson), Կարմրատու բազե(*Falco vespertinus* Linnaeus), Բվեճ(*Bubo bub*) և այլն: Երկկենցաղներից Կանաչ դողդռը (*Bufo viridis*), Սովորական ծառագորտը (*Hyla arborea schelkownikowi*), Լճագորտը (*Pelophylax ridibundus*) և Փոքրասիական գորտը (*Rana macrocnemis*), կաթնասուններից՝ Գորշ արջը(*Ursus arctos* Linnaeus): Ներառված է նաև Երկարոտն սցինկ- *Eumeces schneideri* տեսակը: Կարգավիճակը՝ տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver.3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես <Խոցելի> VU B1ab(iii) +2ab(iii):



Ապոլոն



Կարմրատո բազե

Տարածաշրջանի ջրային ավազաններում հանդիպում են կարմրախայտ, քուռի բեղլու, կողակ և այլ ձկնատեսակներ:

Նախատեսվող գործունեության տարածքում բացակայում են Էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները և կենդանատեսակները, ինչպես նաև բացակայում են կենդանիների միգրացիոն ուղիները՝ տարածքի ուրբանացված լինելու, մարդու ազդեցության գոտում գտնվելու պատճառով:

8.7. Հատուկ պահպանվող տարածքներ

Հայաստանի Հանրապետությունում կենսաբազմազանության պահպանումը, հիմնականում, իրականացվում է Բնության հատուկ պահպանվող տարածքներում (ԲՀՊՏ) (պետական արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր, բնության հուշարձաններ), որտեղ կենտրոնացված է բուսական և կենդանական աշխարհի տեսակազմի մոտ (60-70)%-ը, ներառյալ հազվագյուտ, վտանգված, անհետացման եզրին հայտնված և Էնդեմիկ տեսակների ճնշող մեծամասնությունը:

Գործունեության տարածքն անմիջական սահմաններ ԲՀՊՏ-ների հետ չունի:

Կոտայքի մարզի Աբովյանի տարածաշրջանում, Երևան-Գառնի մայրուղու աջակողմյան հատվածում՝ 1400մ բարձրության վրա գտնվում էլ «Ջրվեժ» անտառպարկը, սահմանակցում է Ողջաբերդ, Ջրվեժ համայնքներին և Երևան քաղաքին: Այն հիմնադրվել է 1977 թվականին՝ պետական անտառային ֆոնդի տարածքում և ունեցել է 400,43 հա մակերես: ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 18 -ի N 684-Ն որոշմամբ հաստատվել են «Ջրվեժ» անտառպարկ տարածքի չափը և սահմանները՝ 423.8 հա: Անտառապարկում աճում են «Կարմիր գրքում» գրանցված հազվագյուտ եւ անհետացող 21 տեսակի բույսեր՝ սոսի արեւելյան, գիհի բազմապտուղ, գիհի կազակական, նշենի սովորական, 100-ից ավելի ծառաթփատեսակներ և պարտեզային ձևեր՝ եղևնի կովկասյան, սոճի դրիմյան, խեժափիճի սիբիրական, թույա արևմտյան, 300 տեսակի անոթավոր բույսեր և այլն: Այստեղ աճում են բարձրարժեք գեղազարդիչ տեսակներ՝ եղևնի սովորական, եղևնի փշոտ, սոճի դրիմյան, գիհիների 5 տեսակներ, թույաների 3 տեսակներ 36 տեսակի վարդագգիների ընտանիքին պատկանող բույսեր և այլն:

8.8. Պատմության և մշակութային հուշարձաններ

Մարզի տարածքում են գտնվում հազարից ավելի պատմամշակութային օբյեկտներ՝

եկեղեցական համալիրներ, եկեղեցիներ, մատուռներ, տուն-թանգարաններ:

Համաձայն ՀՀ կառավարության 2007թ. մարտի 15-ի «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 385-Ն որոշման Կոտայքի մարզում սահմանվում է հուշարձանների ցանկը.(հավելված 9):

Համաձայն հնագիտական և պատմամշակութային հուշարձանների վրա հնարավոր ազդեցության գահատման եզրակացության Արարատյան գոգավորության այս հատվածում հնագիտական ուսումնասիրություններ չեն իրականացվել, այսուհանդերձ 2019-2023 թթ. խնդրո առարկա տարածքի շրջակայքում ուսումնասիրություններ է իրականացրել հնագետ Լևոն Մկրտչյանը, ում կողմից Պոռշյան գյուղի վարչական տարածքում և հարևանությամբ փաստագրվել են ամրոց-բնակատեղի, դամբարանադաշտ, աշտարականման կառույցներ և այլն: Սակայն պատմամշակութային այս միավորները հեռու են գտնվում հայցվող տարածքից և ծրագրի իրականացման դեպքում, ազդեցություն կրել չեն կարող:

Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ-ի շրջանակում մասնագետների կողմից իրականացվել են դաշտային-հնագիտական հետազոտություն, կազմվել է համապատասխան հաշվետվություն: Հավելված 7

Հետազոտության ընթացքում պարզվեց, որ տարածքն արդեն խորհրդային տարիներին օգտագործվել է այգիներ հիմնելու համար, ապա նաև տեղ-տեղ փորվել և հարթեցվել հետագայում կառուցապատում իրականացնելու համար: Տեղում առկա ոչ խորը կտրվածքների և ընդհանուր տարածքի ուսումնասիրության արդյունքում հնագիտական կառույցների հետքեր և նյութեր չեն փաստագրվել:



8.9. Բնության հուշարձաններ.

Կոտայքի մարզը հարուստ է բնական հուշարձաններով: ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N967-Ն որոշման համաձայն՝ մարզում կան 33 բնության հուշարձաններ, որից 20-ը՝ երկրաբանական, 5-ը՝ ջրաերկրաբանական, 4-ը՝ ջրագրական, 1-ը՝ բնապատմական և 3-ը՝ կենսաբանական: Բնական հուշարձանների մի մասն ունի հատուկ պահպանվող տարածքների կարգավիճակ:

Մարզի բնության հուշարձանները ներկայացված են հավելված 9-ում:

8.10. Սոցիալ-տնտեսական.

Կոտայքի մարզը գտնվում է ՀՀ տարածքի կենտրոնում և միակ մարզն է, որը միջպետական սահման չունի ՀՀ հարևան որևէ պետության հետ: Այն հարավարևմուտքից սահմանակից է մայրաքաղաքին, արևմուտքից՝ Արագածոտնի, հյուսիսից՝ Լոռու, հյուսիս-արևելքից՝ Տավուշի, արևելքից՝ Գեղարքունիքի և հարավից՝ Արարատի մարզերին: Մարզի մակերեսը կազմում է 2076 կմ²: Ներառում է 11 համայնք, 7 քաղաքային և 61 գյուղական բնակավայրեր: Մարզկենտրոնը Հրազդան քաղաքն է: Մարզի բնակչությունը 2025թ. տարեկազմի դրությամբ կազմում է 293,3 հազ. մարդ:

Տարածքը Territory	2 076 քառ.կմ/ sq. km.
Հայաստանի Հանրապետության տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը, % Territory share of the marz in the territory of the Republic of Armenia. %	7.0
Համայնքներ, 2025 թ. տարեկազմի դրությամբ Communities. as of the beginning of 2025	11
Քաղաքներ Towns	7
Գյուղեր Villages	61
Բնակչության թվաքանակը 2025թ. տարեկազմի դրությամբ Population number as of the beginning of the year. 2025	293.3 հազ.մարդ/ ths. person
այդ թվում՝ including:	
քաղաքային urban	160.8 հազ.մարդ/ ths. person
գյուղական rural	132.5 հազ.մարդ/ ths. person
Հայաստանի Հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչություն թվաքանակի տեսակարար կշիռը 2024թ., % Share of marz population in the total population of the Republic of Armenia 2024. %	9.5
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2024թ., % Share of urban population size 2024. %	54.8
Գյուղատնտեսական հշանություն հողեր, 2023թ. հուլիսի 1-ի դրությամբ: Agricultural land. as of July 1. 2023.	153 762.4 հա/ ha
այդ թվում՝ վարելահողեր, 2023թ. հուլիսի 1-ի դրությամբ: including: arable land. as of July 1. 2023.	36 682.2 հա/ ha

Կոտայքի մարզը համեմատաբար զարգացած ու բազմաճյուղ տնտեսություն ունեցող մարզերից է: Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողն արդյունաբերությունն է, զարգացած է էներգետիկան, մշակող արդյունաբերություն, որը ներառում է՝ սննդամթերքի և խմիչքների արտադրություն (մսի և մսամթերքի մշակում և պահածոյացում, մրգերի և բանջարեղենի մշակում և պահածոյացում, կաթնամթերքի, այլուրի, խմիչքների արտադրություն, ծխախոտային արտադրատեսակների արտադրություն), ոչ մետաղական հանքային այլ արտադրատեսակների արտադրություն (ապակու և ապակե արտադրատեսակների արտադրություն, ցեմենտի արտադրություն), հիմնական մետաղների արտադրություն, (թուջի, պողպատի և ֆեռոհամահալվածքների արտադրություն), ոսկերչական արտադրատեսակների, ոչ թանկարժեք

զարդերի արտադրությունը:

Համաձայն ՀՀ կադաստրի կոմիտեի կայք էջի՝ մարզի գյուղնշանակության հողերը 2023թ. հուլիսի 1-ի դրությամբ կազմում են 153,762,4հա, որից վարելահողերը՝ 36,682,2հա: Մարզի գյուղատնտեսությունը մասնագիտացած է թռչնաբուծության մեջ: Մարզի տարածքում են գործում հանրապետության 3 խոշոր թռչնաֆաբրիկաներ: Բեռնատրակտորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային, երկաթուղային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով: Մարզի տարածքի կենտրոնական մասով անցնում են երկրի համար առանցքային նշանակություն ունեցող Երևան-Հրազդան-Սևան ավտոմայրուղին և Երևան-Հրազդան-Իջևան երկաթգիծը::

2024թ.-ին մարզի տնտեսության հիմնական ոլորտների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն 10.6 %,
- գյուղատնտեսություն 8.7 %,
- շինարարություն 10.4 %,
- մանրածախ առևտուր 5.0 %,
- ծառայություններ 3.7 %:

Մարզի գյուղատնտեսության ոլորտի հիմնական ուղղություններն են՝ բուսաբուծությունը և անասնապահությունը:

Նաիրի համայնք /Եղվարդ՝ նախկին վարչական շրջանի անվանումը/. համաձայն <https://yeghvard.am/Pages/CustomPage/> կայք էջի՝ 2024թ. համայնքի հողային ֆոնդը կազմում է 20597,06հա, որից գյուղնշանակության հողերը՝ 16708.96հա: Համայնքի կենտրոնը Եղվարդ քաղաքն է: Համայնքը զազիֆիկացված է: Համայնքի տարածքով է անցնում միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհներ, զարգացած է ներհամայնքային երթուղիները: Համայնքի բնակչությունը 2024թ. կազմում է 39726մարդ:

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2017 թվականի հունիսի 9-ի ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Եղվարդ, Արագյուղ, Բուժական, Չովունի, Չորավան, Սարալանջ համայնքների միավորման արդյունքում ձևավորվել է Եղվարդ համայնքը, որը 2021թ-ին վերանվել է Նաիրի: Համայնքն իր վարչական սահմաններով սահմանակից է Չարենցավան, Թեղենիք, Քարաշամբ, Նոր Գեղի, Նոր Արտամետ, Սրգաշեն, Քանաքեռավան, Քասախ, Պոռոշյան, Նոր Երզնկա, Երևան համայնքներին և Արագածոտնի մարզին: Համայնքի հեռավորությունը մայրաքաղաքից կազմում է 30կմ, մարզկենտրոնից՝ 50կմ, պետական սահմանից/ուղիղ գծով/ 60կմ: Համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է 1500մ: Համայնքի կենտրոնը Եղվարդ քաղաքն է: համայնքում առկա են 11 հատ հանրակրթական, 6 հատ նախադպրոցական. 3 հատ արվեստի դպրոցներ, 9 հատ գրադարան, 1 մարզդպրոց, առևտրային բանկերի մասնաճյուղեր: Համայնքի տարածքով է անցնում միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհներ:

Եղվարդ քաղաքը գտնվում է Արայի լեռան հարավային ստորոտում՝ ծովի մակերևույթից 1300 մետր բարձրության վրա, հեռավորությունը Երևանից 18 կմ է: Բնակչությունը 2025թ. տարեսկզբին կազմում է 13.2 հազ. բնակիչ: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ հատկապես առանձնանում է սննդամթերքի և խմիչքների արտադրությունը (թորած ալկոհոլային խմիչքների (կոնյակի), կաթնամթերքի), կաշվե արտադրատեսակների և կոշկեղենի արտադրությունը: Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի նաև գյուղատնտեսությունը, որի մեջ հիմնական ուղղությունը հացահատիկի մշակությունն է: Համայնքի հիմնախնդիրներից են խմելու ջրի ներքին ցանցի, մանկարատեզի շենքային պայմանների, ներհամայնքային ճանապարհների անբավարար վիճակը և այլն:

Եղվարդը քաղաքի վարչական տարածքը 6722 հա է: Եղվարդը որպես բնակավայր հայտնի

Է հնագույն ժամանակներից՝ մոտ 6-րդ դարից սկսած: Հնում Եղվարդը եղել է գրչության կենտրոն: Եղվարդի հին բնակավայր լինելու մասին են վկայում նաև 5-րդ դարում կառուցված դահլիճ-եկեղեցին, քրիստոնեական ընդարձակ գերեզմանատունը, որտեղ կան 10-15-րդ դարերի քանդակագարդ գերեզմանաքարեր, ինչպես նաև գերեզմանատան հարավային մասում առկա հեթանոսական ժամանակներից հսկա որձաքարերից շարված շինության հետքեր: Միջնադարյան ճարտարապետական հուշարձաններից արժեքավոր է քաղաքից հյուսիս-արևելք՝ Արայի լեռան լանջին, 7-րդ դարում կառուցված Չորավոր եկեղեցին: Եղվարդի կենտրոնական մասում կանգուն է 1301թ-ին կառուցված Սուրբ Աստվածածին երկհարկ ռոտոնդայով ավարտվող եկեղեցի-դամբարանը: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, կերային կուլտուրաների, խաղողի և պտղատու այգիների մշակմամբ: Եղվարդով անցնում են Արզնի-Շամիրամ ջրանցքը և Մասիս-Նուռնուս երկաթգիծը:

Պոռոշյան բնակավայրը /գյուղը/ հիմնադրվել է 1960թ., գտնվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի՝ Մ-1 Երևան-Աշտարակ ավտոմոբիլային ճանապարհի վրա՝ մարզկենտրոն Հրազդան քաղաքից 52 կմ, մայրաքաղաք Երևանից՝ 4 կմ հեռավորությունների վրա:

Հյուսիսային կողմից գոտիավորվում է ջրանցքի 2-րդ հերթով, արևելյան կողմից սահմանակից է Քասախ գյուղին, հարավից՝ Արագածոտնի մարզի Սասունիկ գյուղին, իսկ արևմուտքից՝ Արայի համայնքին: Գյուղում գործում է կոնյակի գործարան: Բնակչությունն զբաղվում է խաղողագործությամբ և անասնապահությամբ: Պոռոշյանում գործում են՝ 1 դպրոց, 1 մանկապարտեզ, 1 արվեստի դպրոց, 1 գրադարան: 2025թ, տարեսկզբի դրությամբ ունի 6238 բնակիչ:

9. Նախատեսվող գործունեության բնութագիր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները, օգտագործվող բնական ռեսուրսներ և նյութեր, (շինարարության շահագործման , փակման փուլեր).

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է «ՎԻ-ԷՅՁ-ԷՍ» ՓԲԸ-ի կողմից՝ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Գ. Պոռոշյան, Գ. Չաուշի խճուղի 1/72 հասցեում՝ 0,68725 հա մակերեսի վրա: Նախատեսվում է համապատասխանաբար կառուցել բազմաբնակարան բնակելի համալիր :

Համաձայն Նաիրի համայնքի կողմից տրված նախագծման թույլտվության նախատեսվում է.

- Վերգետնյա հարկեր 8 և 1 նահանջ հարկ, ստորգետնյա հարկեր 2:
- Բազմաբնակարան շենք /ներառյալ ստորգետնյա հարկեր 32550ք.մ:
- Թույլատրելի բարձրություն մինչև 35մ:

9.1.Շինարարության փուլ. Շինարարական աշխատանքները կազմակերպվելու են փուլերով՝ նախապատրաստական և հիմնական: Նախապատրաստական աշխատանքների փուլը տևելու է 2 ամիս:

Շինարարական հրապարակ. շինհրապարակում նախատեսվում է հետևյալ նախապատրաստական և հիմնական աշխատանքներ.

- շինարարական հրապարակի կազմակերպում,
- ժամանակավոր ցանկապատում,
- պահեստային և մոնտաժային հարթակների կազմակերպում,
- շին. նյութերի ընդունման հարթակների պատրաստում,
- անիվների լվացման հարթակի տեղադրում,

- հակահրդեհային միջոցների տեղադրում,
- կենցաղային, գրասենյակային ժամանակավոր շինությունների,
- հողային աշխատանքներ,
- երկաթբետոնե աշխատանքներ,
- տանիքային աշխատանքներ,
- Ինժեներական ցանցեր
- տարածքի բարեկարգման աշխատանքներ և այլն:

Շինարարական աշխատանքների իրականացման համար նախատեսվող շինհրապարակն ամբողջ տարածքն է, որից ջրցանվող մակերեսը կազմելու է մոտ 1000մ²:


Շին. հրապարակում լինելու են աշխատողների համար ժամանակավոր շինություններ.

- գրասենյակ-1 հատ
 - հանդերձարան/տաքացման սենյակ
 - լվացարան` ծորակով` 4 հատ
 - ցնցուղարան -3հատ
 - ճաշարան` 2` 24.3մ² մակերեսով
 - բիո զուգարան- 1*1,5 չափերի` 2 հատ
 - ավտոմեքենաների, մեխանիզմների կայանման, առասանման ճոպանների տեղակայման վայրեր,
- պահակատուն -1 հատ,
- փակ պահեստ,
- հակահրդեհային վահանակ, հիդրատներ-2հատ
- շին. տեխնիկայի, մեքենաների կայանման վայր
- աղբի տարաներ` 2 հատ
- ավտոմեքենաների անիվների լվացման կետ 1 հատ 7,30 x 3,3 մ չափերի :

Շինհրապարակն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ և լուսային ազդանշանային համակարգով: Տեղադրվելու են 10 հատ լուսարձակներ:

Շինհրապարակում նախատեսված է շինարարական աղբի պահման տարածքը:

Շինհրապարակի կազմակերպման հատակագիծը



	Նախագիծը պատրաստող	Մ. Առնիկյան	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՆՈՒՅՑ ԿՈՄԻՏԵ ԿԱԽՈՒՅՄԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՆՈՒՅՑ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՆՈՒՅՑ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԽՈՒՅՄԻ	ՓԵՆ-Ը	ՔԻՄ-Ք	ՔՐԵՊ-Ճ
	Նախագիծը	Մ. Կոչյան		ՏԻ	ԷԳ-Յ	ՕԵ
«ԵՐԵՎԱՆԻ ԿՐԹԱՆՈՒՅՑ ԿՈՄԻՏԵ»-ի կողմից			Շին. կառուցվածքային			

Շինարարության ժամանակ նախատեսվող ժամանակավոր պահեստներն, ինչպես նաև աշխատողների համար նախատեսվող ճաշարանը, հանդերձարանը, գրասենյակը, պահակատունը տեղադրվելու են տարածքում՝ ժամանակավոր վագոն տնակներում:

Շինհրապարակի տարածքում կատարվելու է մեքենաների անիվների լվացում, որի համար նախատեսված է 1 հատ անիվների լվացման կետ՝ 7,30x3.3մ չափերով: Անիվների լվացում պահանջող մեքենաները պետք է անցնեն անիվների լվացման սարքի միջով՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ: Շինհրապարակում անիվների լվացումից առաջացած, ինչպես նաև շինարարական հոսքաջրերը բակային ջրահեռացման ցանցով հեռացվում են դեպի բիոզուգարաններ: Իսկ անձրևաջրերից առաջացող հոսքաջրերը պլաստմասսե վերգետնյա խողովակներով, բակային սելավային ջրացանցի միջոցով հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող համապատասխան տարողության պարզարան: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում: Պարզեցված ջուրը կօգտագործվի շինարարական աշխատանքների ժամանակ արտադրական հրապարակի ջրցանման և անիվների լվացման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադք:

Շինհրապարակը ցանկապատվելու է ժամանակավոր ցանկապատով տրամատավոր թիթեղից 2,2 մ բարձրությամբ, դարպաս, դռնակով: Պարսպի արտաքին մասում տեղադրվելու է տեղեկատվական պաստառ:

Շինհրապարակն ապահովված է լինելու՝ հակահրդեհային վահանակով, կենցաղային աղբամաններով, էլեկտրականությամբ, գիշերային լուսավորությամբ՝ 2 յուրքսից ոչ պակաս:

Բոլոր տիպի շին-մոնտաժային աշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարական նորմերը, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Ելնելով առկա պայմաններից շինարարության փուլում նախատեսվում են անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ, հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների հետ:

Շինարարական նյութերը պահեստավորվելու են շինհրապարակում:

Հողային աշխատանքներ. կառուցապատման ժամանակ կատարվելու են հողային աշխատանքներ՝ հանույթ՝ 35000 մ³ ծավալի հողային աշխատանքներ, կատարվելու է հետ լիցք՝ 8600մ³: Մնացած 26400մ³, որից 700մ³ բուսահող է պահպանվելու է, 25700մ³ ծավալի հողային զանգվածը տեղափոխվելու է համայնքի կողմից հատկացված վայր: Հողային զանգվածն առաջանալու է շենքի հիմքերի, խրամուղիների փորման, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման համար նախատեսվող աշխատանքներից:

Հողային և հիմնային, տանիքի, հատակների հարդարման, ինչպես նաև լրող և պատող կոնստրուկցիաների շին մոնտաժային աշխատանքները կատարվելու են համաձայն աշխատանքային նախագծի՝ ՇՆուԿ 3.02.02.-87-ի և ՇՆուԿIII-4-81-ի, ՄՆԻՊIII-IV.2008թ.-ի դրույթների պահանջներին համապատասխան:

Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ. գործունեության կատարման շինարարության փուլում օգտագործվող հիմնական տեխնիկա-տրանսպորտային միջոցներն են.

- ավտոմոբիլային կցովի վերամբարձ կռունկ
- ավտոմոբիլային կռունկ
- Էքսկավատոր
- գլդոն
- ավտոհինքնաթափ
- ավտոբետոնախառնիչ
- շարժական կոմպրեսոր
- տոփանիչ, եռակցման սարքեր
- ձեռքի էլեկտրական և պարզագույն մեխանիկական գործիքներ և այլն:

Շինարարական աշխատանքների՝ բեռնման-բեռնաթափման ժամանակ օգտագործվող բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտներին կամ տեխնիկական պայմաններին՝ համաձայն ՇՆ և Կ III-4-80* պահանջներին: Բեռնման և բեռնաթափման համար նախատեսված տարածքը պետք է հարթեցվի և ունենա 5⁰-ից ոչ ավել թեքություն:

Շինտեխնիկական լինելու է Կապալառու ընկերության սեփական տեխնիկական կամ անհրաժեշտության դեպքում վարձակալվելու են այլ կազմակերպություններից: Մեքենաներն աշխատելու են ըստ հերթականության և ըստ անհրաժեշտության: Աշխատող մեքենաները կայանվելու են գործունեության տարածքում՝ շին.հրապարակում: Շինարարական տեխնիկայի և սարքավորումների կայանման վայրերում նախատեսվում է բետոնասալերի օգտագործում՝ վառելիքի կամ քսայուղերի հնարավոր արտահոսքը հողային և ջրային ռեսուրսներ կանխելու նպատակով:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Կառուցապատման բոլոր լուծումների համար հաշվի են առնվելու տեղանքի պայմանները, կազմակերպվելու է անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր միջոցառումներ՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով:

Ամբողջ շինարարության ընթացքում վերահսկվելու են շինարարության որակի չափանիշները՝ տեխնիկական վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից: Ակտավորվելու են թաքնված աշխատանքները, գրանցելով վարման մատյանում:

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ՝ հատկապես կապված կոունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների հետ:

Էլեկտրամատակարարում. շինարարության ընթացքում լինելու է ժամանակվոր Էլեկտրամատակարարում: Էլեկտրամատակարարումը կատարվելու է համաձայն՝ «ՀԷՑ» ՓԲԸ կողմից տրամադրված տեխնիկական պայմանի:

Ջրամատակարարում և ջրահեռացում. Շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում առկա ջրագծից:

Շինարարության փուլում աշխատողների կենցաղային կարիքների հոգալու նպատակով տեղադրվելու է բիոզուգարաններ 2՝ լվացարանով:

Հրդեհաշիջման համակարգ. շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվելու են «Քաղաքաշիջման, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին»-ի կողմից տրված հրահանգներով: Տեղադրվելու է հրդեհաշիջման 1 վահանակ, հիդրատներ՝ 2 հատ:

Շինարարության փուլում տեղադրվելու է նաև 5 տոննա տարողության ջրի բաք՝ հրդեհամարման, ջրցանի նպատակով:

Աղբահեռացում. շինարարության ընթացքում առաջանալու են շինարարական նյութերի մնացորդներ շինարարական աղբի տեսքով՝ մոտ 200մ³ ծավալով: Շինաղբի կուտակումը կատարվելու է շինհրապարակում նախատեսված վայրում՝ պարկերի մեջ, չգերազանցելով նախատեսված բարձրության նորմերը:

Կենցաղային աղբը կառուցապատման փուլում կազմելու է 12600կգ/տարի: Կենցաղային աղբի կուտակման համար տեղադրվելու են 1.5*1 չափերի 2 աղբարկղ:

Շինարարության փուլում աղբահեռացումը կատարվելու է համաձայն Նաիրի համայնքի կողմից տրված աղբահանության տեղեկանքի:

Սոցիալական. շինարարության ընթացքում աշխատողների առավելագույն քանակությունը կազմում է 81 մարդ, որից ինժեներատեխնիկական աշխատողներ՝ 5 մարդ, բանվորներ 76 մարդ :

Բարեկարգում. Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել:

Կանաչապատում. Տնկվելու են 67 հատ նոր ծառեր և թփեր: Ամբողջ տարածքի ազատ հատվածներ կանաչապատվելու են խոտածածկի տեսքով: Կանաչապատումն իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ բուսականությամբ՝ համաձայն Նաիրի համայնքապետարանի կողմից համաձայնեցված կանաչապատման նախագծի (Կանաչապատման նախագիծը կներկայացվի Նաիրի համայնքապետարանի համաձայնեցմանը):

9.2. Շինարարության իրականացման ժամանակացույցը

Շինարարական աշխատանքների ընդհանուր տևողությունը կազմելու է 3,5 տարի կամ 42 ամիս:

Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակացույց

9.3 Օգտագործվող բնառեսություններ և նյութեր

Կառուցապատման շինարարության փուլում բնառեսություններից օգտագործվելու է ջուր, իսկ շահագործման փուլում ջուր՝ խմելու-կենցաղային նպատակով:

Ջուր. շինարարության փուլում ջուրն օգտագործվելու է աշխատողների խմելու, տնտեսա-կենցաղային կարիքների, տարածքի ջրցանի, հողի(գրունտի) խոնավացման և անհրաժեշտության դեպքում հրդեհաշիջման համար:

Աշխատողների տեխնիկական և կենցաղային նպատակների համար օգտագործվելու է կից ճանապարհով անցնող գոյություն ունեցող ջրագիծը: Ջրցանի համար նախատեսվող տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով: Ջուրը լցվելու է տարածքում տեղադրվող 5տ տարողության բաքի մեջ: Ջրի մատակարարման հաճախականությունը կատարվելու է ըստ կարիքի: Տեխնիկական ջուրն ըստ անհրաժեշտության օգտագործվելու է հրդեհամարման, ջրցանի և անիվների լվացման համար: Ջրցանի համար նախատեսված տեխնիկական ջուրը մատակարարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կամ անձանց կողմից, որոնց հետ պայմանագիրը կկնքվի կապալու կազմակերպությունը շինարարական աշխատանքների սկզբում:

ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W\ddot{E}.i. = (n \times N + n1 \times N1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 5 մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ3օր/մարդ

n1– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 71 մարդ

N1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025մ3օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 1090 օր:

$$W\text{խ.տ.} = (5 \times 0.016 + 71 \times 0.025) \times 1090 = 2021,95 \text{ մ3/շին. ժամ. կամ } 1,86 \text{ մ3/օր:}$$

բ) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝ $U1 = S1 \times K1 \times T$, որտեղ՝

S1 – ջրվող տարածքի մակերեսը 1000 մ2, (արդիրապարակ, ճանապարհներ)

K1 – 1մ2 օրական ջրցանի նորմը, 0.0015մ3,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 250 (առավելագույնը 250օր, ներառված կրկնակի ջրցանը)

$$U1 = 1000 \times 0.0015 \times 250 = 375 \text{ մ3/շին. ժամ. կամ } 0.344 \text{ մ3/օր:}$$

Ընդամենը ջրի սպառումը շինարարության փուլում կլինի 2396.95 մ3/շին. ժամ կամ 2,204մ3/օր:

Կեղտաջրեր. շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տեղադրվող 1*1,5 չափերի սանհանգույցից՝ 2 հատ բիոզուգարանից: Բիոզուգարանների մաքրումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շահագործման փուլում ջրամատակարարման համակարգը միանալու է Պռոշյան բնակավայրի ջրագծին: Հրդեհաշիջման համար պահանջվող ջրի ելքը հաշվարկվել է համաձայն «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» ՀՀՇՆ.40-01.01-2014 նորմերի:

9.4. Նյութեր. Շինարարության ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, մասնավորապես.

- երկաթբետոն, երկաթբետոնե կարկասներ
- փայտ
- մետաղ, մետաղական կառուցվածքներ
- ամրանային ձողեր
- ավազ, խիճ,
- գիպսաստվարաթուղթ
- քար
- բետոն
- բետոնյա սալ

- ֆասադային վիտրաժներ
- ապակի
- բազալտ
- բարձրորակ սվաղ, ներկ և այլն:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույցի տեղադրում և բետոնախառնուրդի պատրաստում չի նախատեսվում: Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից՝ համապատասխան բետոնախառնիչ մեքենաներով: Շինհրապարակում նախատեսվում է բետոնի տեղադրման վայր՝ պաշտպանված քամուց, անձրևից և ձյան տեղումներից: Բետոնը շինհրապարակում լցվելու է կաղապարների մեջ բետոնամղիչով:

Շինաշխատանքերը կատարվելու են մասնագիտացված կապալառու կազմակերպությունների կողմից: Շինարարության համար նախատեսված բոլոր նյութերն, ինչպես նաև շենքի արտաքին և ներքին հարդարման նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված (լիցենզավորված) կազմակերպություններից՝ շինինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր շինարարական կազմակերպության արտադրական բազայից:

Ձմռանը ներքին հարդարման և բետոնային աշխատանքները կատարվելու են հատուկ տաքացման պայմաններում:

Շինհրապարակում շինանյութերը պահեստավորվելու են պահեստներում, իսկ բաց տարածքի դեպքում կտեղադրվեն տակդիրների վրա՝ չգերազանցելով նախատեսված բարձրության նորմերը: Սորուն նյութերը պահեստավորվելու են ծածկի տակ:

9.5. Նոր կառուցվող շենքի տեխնիկա-տնտեսական ցուցանիշները և լուծումները

Բնակելի շենքը բաղկացած է ամբողջական մանաշենքից: Շենքի հարկայնությունը կազմում է 9 հարկ/ 8 և մեկ նահանջ հարկ/ : Որոշ չափով արտահայտված ռելիեֆի պատճառով մասնաշենքը լուծված է աստիճանաձև:

Շենքի տեխնիկա-տնտեսական ցուցանիշներն են.

Հողատարածքի մակերեսի չափը 0,6872 հա,

Կառուցապատման մակերեսը 2720 քմ,

Կանաչապատման մակերես 2740 քմ

/որը կազմում է հողատարածքի 40%,

Անջրանցիկ տարածք 1412 քմ

/որը կազմում է հողատարածքի 20 %/,

Տիպային հարկի մակերեսը 2900 քմ, ստորգետնյա կառուցապատման ընդհանուր մակերեսը 12800 քմ, կառուցապատման ընդհանուր մակերեսը 24890 քմ /վերգետնյա հարկեր/, կառուցապատման ընդհանուր մակերեսը /ստորգետնյա հարկերը ներառյալ/ 37690քմ, բնակարանների քանակը 178, ավտոկայանատեղիների քանակը 286, շենքի վերգետնյա հարկերի քանակը 8 եվ նահանջ հարկ, ստորգետնյա հարկերի քանակը 2:

Առաջին հարկը բաղկացած է հասարակական տարածքներից և բնակելի տներից, որոնք ունեն այգի յուրաքանչյուրն իր տերրասի դիմաց: Առաջին հարկը նախատեսվում է հասարակական նշանակության,ինչը նույնպես կնպաստի բնափչների որակյալ և ինքնաբավ առօրյան կազմակերպելու համար: Առաջին հարկերում նախատեսվում են խանութներ, մանկական զարգացման կենտրոն,պատանեկան տարբեր ուղղվածությամբ խմբակներ և այլ կենցաղային

կարիքներ հոգալու սենքեր: Կա նաև լողավազան: Առաջին հարկից վերև տիպային հարկերն են, յուրաքանչյուր հարկում 32 բնակարան: 9-րդ հարկը նահանջ հարկ է՝ ընդարձակ բնակարաններով և տերրասներով:

Շենքն ապահովված է լինելու ձայնամեկուսացման, ջերմամեկուսացման, օդափոխության և ավտոմատ հրդեհային ազդարարման համակարգերով՝ ծխի և ջերմային ազդանշանային ընդունող-հսկիչ սարքերով, լուսաձայնային-ազդանշանային ազդասարքերով, հրշեջ-փրկարարական մեքենաների մոտեցման ուղիներով:

Շահագործման փուլում շենքն ապահովված է լինելու նաև բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար տեղաշարժվելու հնարավորություններով և պաշտպանության միջոցառումներով, որոնց լուծումները նախատեսվել են քաղաքաշինության նախարարի 2006թ. հոկտեմբերի 10-ի N 253-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Նախագծային լուծումները կատարվելու են հիմք ընդունելով ՀՀ կառավարության 12.04.2018թ «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» N426-Ն որոշմամբ սահմանված պահանջները՝ էներգախնայողության և էներգաարդյունավետության ապահովմանն ուղղված միջոցառումներին համապատասխան: Ինժեներատեխնիկական համակարգերի համար նախատեսված էներգաարդյունավետության նվազագույն պահանջները վերաբերում են՝

- 1) ջեռուցման համակարգերին.
- 2) տաք ջրամատակարարման համակարգերին.
- 3) օդի լավորակման համակարգերին.
- 4) ընդհանուր օդափոխման համակարգերին կամ դրանց համակցությանը.
- 5) լուսավորության համակարգերին:

Քաղաքացիական պաշտպանության եւ արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումների կազմակերպման նպատակով, նախագծվող բազմաբնակարան բնակելի շենքի ստորգետնյա հարկերը -3,90 և -7,80 նիշերում ունեն երկակի գործառնական նշանակություն: Խաղաղ պայմաններում դրանք կշահագործվեն որպես ավտոկայանատեղի, իսկ ռազմական դրության պայմաններում՝ որպես պարզագույն ապաստարան: Դեպի ապաստարան ուղղորդումը կազմակերպվում է լուսային ցուցանակների /ՄՈՒՏՔ,ԵԼՔ/միջոցով:

Նկուղային հարկերում նախատեսված է նաև վթարային լուսավորության համակարգ: Ապաստարանում գտնվելու ժամանակահատվածում մարդկանց նվազագույն կենցաղային կարիքները ապահովելու համար նախատեսված է սան.հանգույց/տես գծագիր/ և օդափոխություն, ջրամատակարարման եւ ջրահեռացման համակարգեր: Աստիճանավանդակների դռները հակահրդեհային են եւ ինքնափակվող: Ընդհանուր հողատարածքը բարեկարգվելու է կանաչապատվելու է՝ ըստ գլխավոր հատակագծի:

Ջեռուցում և կաթսայատուն

Շենքում իրականացվելու է ջեռուցման-հովացման և օդափոխության համակարգեր:

Որպես ջերմային աղբյուր ծառայում է շենքի տանիքում տեղակայված անհատական կաթսայատունը, իսկ ջերմակիրը հանդիսանում է ջուրը:

Կաթսայատանը նախատեսված են կոնդենսացիոն ջրատաքացուցիչ կաթսաներ, հիդրավլիկ սլաք՝ համակարգերում ջերմաստիճանի և ճնշման կարգավորման համար, արագային ջերմափոխանակիչներ և ծավալային ջրատաքացուցիչներ՝ տաք ջրամատակարարման ստացման համար, շրջանառու պոմպեր՝ աշխատող և պահուստային համակարգերով, ընդարձակման բաքեր, բաշխիչ սանրիկներ, ջրափափկեցման կայանք և այլն:

Բնակելի հարկերում դեպի բնակարաններ համակարգերի բաշխման համար

նախատեսված են բաշխիչ սանրիկներ՝ ջերմային հաշվիչներով և ջերմա-ճնշումային կարգավորման արմատուրայով: Խողովակաշարերը նախատեսված են մետաղական և պոլիպրոպիլեն: Բոլոր խողովակաշարերը մեկուսացվում են, մետաղական խողովակները ներկվում են հակակոռոզիոն ներկով, իսկ մոնտաժն իրականացվում է առաստաղով: Ծխատարի տրամագիծը կազմում է D-500, բարձրությունը՝ 10 մ:

Աստիճանավանդակների և վերելակների նախամուտքերի ջեռուցման համար նախատեսված են ջեռուցման այլումինե մարտկոցներ 500մմ բարձրությամբ և կարգավորող, խցանող փականներով:

ՀՀ	Անվանում	Չափման միավոր	Քանակը
1	Կաթսայատան հաշվարկային հզորություն	կՎտ	2500.0
2	Կաթսայատան տեղակայված հզորություն	կՎտ	2875.0
3	Պահեստային հզորություն	կՎտ	375.0
4	Գազի հաշվարկային ժամային ծախսը ձմռանը	Նմ3/ժ	332.2
5	Գազի հաշվարկային ժամային ծախսը ամռանը	Նմ3/ժ	53.15

Հակահրդեհային օդափոխության համակարգ Ավտոկայանատեղիի ծխահեռացման համար նախատեսված են ծխի փականներ: Ծխահեռացման օդամուղները նախատեսված են տանիքում:

Դիմհար համակարգեր նախատեսված են աստիճանավանդակների նախամուտքերում և վերելակների հորաններում: Աստիճանավանդակի նախամուտքի դիմհարի օդամուղը նախատեսված է կանալային տիպի և տեղադրվում է հարկի առաստաղի տակ:

Նախամուտքերում 100 Պա ճնշման պահպանման համար դռների վերևում նախատեսված են ավելցուկային ճնշման փականներ (оксид веса), որոնք բացվում են դեպի ավտոկայանատեղի:

Ծխահեռացման և կոմպենսացիայի համակարգեր նախատեսված են նաև բնակելի հարկերի միջանցքներում:

Ծխահեռացման և դիմհարի օդատարները նախատեսվում են կցաշտրթային միացմամբ: Ծխահեռացման օդատարները սև պողպատից են (1.0 մմ հաստությամբ)՝ կցաշտրթային միացմամբ: Դիմհարի օդատարները նախատեսված են ցինկապատ պողպատից՝ 0.9 մմ հաստությամբ:

Բոլոր օդատարները ներկվում են հրակայուն ներկով, իսկ ծխահեռացման օդատարները մեկուսացվում են 5 սմ հաստությամբ հրակայուն մեկուսացմամբ:

Օդատարների կախիչները և ս ներկվում են հակակոռոզիոն ներկով:

Հակահրդեհային համակարգի աշխատանքի ժամանակ սենքերի օդի ներածման և արտածման համակարգերն անջատվում են, իսկ գործարկումը կատարվում է հրդեհային ազդասարքից և հեռակառավարման վահանակից: Օդի արտածման օդամուղի դիմաց նախատեսված է հակահրդեհային փական: Շենքի հակահրդեհային պաշտպանությունը կազմակերպվելու է համաձայն՝ ՀՀՇՆ 21-01.01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմերի, «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի» կողմից տրված հրահանգների, ինչպես նաև փոշեհատիկային հրդեհաշիջման մոդուլների տեխնիկական անձնագրերի հիման վրա:

Ջրամատակարարման համակարգ Շենքերի ջրամատակարարումը իրականացվում է

քաղաքային ջրագծից: Սառը ջրի մուտքագիծը նախատեսվում է -1-ին հարկով: Կենցաղային ջրամատակարարումն ապահովելու համար նախատեսված է պոմպակայան: Պոմպակայանում նախատեսված են 1 լրակազմ ինվերտորային կայանքներ 3 պոմպով՝ խմելու-տնտեսական կարիքների համար (երկուսը աշխատող, մեկը պահուստային): Բնակարանների ջրաչափերի վրա ջրի ճնշումը հաշվարկված է ոչ պակաս, քան 2մթն:

Բնակելի շենքի բոլոր հարկերի միջանցքում նախատեսվում են ջրաչափական հորաններ, որտեղ տեղադրված են բնակարանների տաք և սառը ջրամատակարարման ջրաչափերը: Մայրուղի խողովակներն և կանգնակները նախատեսված են պոլիպրոպիլենե, իսկ բնակարաններ գնացող խողովակները՝ մետաղապլաստե:

Չակահրդեհային ջրամատակարարում և ավտոմատ հրդեհաշիջում: Բնակելի համալիրի հակահրդեհային ջրամատակարարումն ապահովվելու համար նկուղային -2 հարկում^ա -6.90 նիշում, նախատեսված է պոմպակայան, որտեղ տեղադրված է երկաթբետոնե ջրամբար^ա $V=70մ^3$ / ծավալով:

Պոմպակայանում նախատեսված է երկու խումբ պոմպային կայանք^ա մեկը նախատեսված է ավտոկայանատեղիների ինքնաշխատ հրդեհամարման և հրշեջ ծորակների համար, մյուսը բնակելի հարկերի հրշեջ ծորակների համար: Ավտոկայանատեղիների պոմպային կայանքն ունի հետևյալ պարամետրերը^ա $Q=70մ^3//ժամ$, $H=17մ$, $N=5.5կՎտ$, 380Վ: Իսկ բնակելի հարկերի պոմպային կայանքն ունի հետևյալ պարամետրերը^ա $Q=18մ^3//ժամ$, $H=49մ$, $N=5.5կՎտ$, 380Վ:

Պոմպերի ավտոմատ և դիստանցիոն միացման դեպքում միաժամանակ լուսային կամ ձայնային ազդանշան է գնում դեպի պահակատուն: Պոմպակայանում բոլոր խումբ պոմպերի աշխատանքները ավտոմատացված են, կապված վթարային վիճակների, ճնշման փոփոխությունների հետ:

Նկուղային հարկերում բացի ինքնաշխատ հրդեհաշիջման համակարգից նախատեսված են նաև հրշեջ ծորակներ $2x5լ/վրկ$ ելքով:

Բնակելի հարկերի միջանցքներում նախատեսված են հրշեջ ծորակներ $d=50մմ$, $L=20մ$ փողրակներով և $d=16մմ$ ծայրափողով, $2.5լ/վրկ$ և $2x2.5լ/վրկ$:

Բնակելի 2-ից 7-րդ հարկերի հրշեջ ծորակների միացման տեղում նախատեսված են տափողակներ ճնշման կարգավորման համար (թույլատրելի ճնշումը 4մթն.):

Չամակարգը փորձարկելուց առաջ իրականացվում է լվացում/ պարզաջրում, փորձարկումն իրականացվում է ըստ նորմատիվային պահանջների:

Կենցաղային կոյուղի և ջրահեռացում Բնակելի շենքի կենցաղային կեղտաջրերը ինքնահոս տարբերակով հեռանում են բակային ցանցից հավաքվելով դեպի կոյուղու քաղաքային կոլեկտոր: Կոյուղու կանգնակները նախատեսված են հորանների մեջ:

Կոյուղու ցանցը իրականացվում է պոլիվինիլքլորիդային ոչ ճնշումային կոյուղու լայնուկավոր PVC $\Phi 50-160մմ$ խողովակներից, իսկ նկուղային հարկի հավաքող գծերը և թողարկները կոյուղու PVC $\Phi 50-160մմ$ պոլիվինիլքլորիդային խողովակներից հրակայուն մեկուսացումով:

Կենցաղային կեղտաջրերը շենքից հեռանում են -1-ին հարկով:

Բոլոր ձևավոր մասերը նախատեսվում են 45° անկյամբ:

Բնակելի շենքի հարթ տանիքից անձրևի և հալոցքի ջրերը ներքին ջրհոսի ցանցով հեռանում են բակային ցանցից հավաքվելով դեպի հեղեղատար կոյուղու քաղաքային կոլեկտոր:

Ներքին ջրհոսը նախատեսված է պոլիէթիլենային ՈՒՃ և PVC կոյուղու պոլիվինիլքլորիդային $\Phi 50-160մմ$ խողովակներից, որոնք միանում են ռետինե սեղմիչ օղակներով:

Բաց պատշգամբների ջրահեռացումը իրականացվում $\Phi 50$ մմ խողովակներով՝ որոնք միանում են շենքի ընդհանուր հեղեղատար համակարգին:

Ավտոկայանատեղերի լվացման, հալոցքի և հրդեհամարումից հավաքված ջրերի հեռացման

համար նախատեսված են հոսակներ և ջրհավաք առվակներ:

Էլեկտրամատակարարում Ըստ հուսալիության աստիճանի շենքի հոսանքասպառողները պատկանում են 1-ին և 2-րդ կատեգորիայի: Առաջին կատեգորիայի սպառողներն են՝ վերելակները, վթարային և տարահանման լուսավորությունը, հակահրդեհային ջրամատակարարման սարքավորումները, ծխահեռացումը և հակահրդեհային ահազանգի պաշտպանության վահանակը: Մնացած բոլոր սպառողները պատկանում են 2-րդ կատեգորիայի սպառիչներին:

Շենքի համար նախատեսվում է մեկ ընդհանուր ենթակայան՝ առանձին շինությունով: Տրանսֆորմատորի տեսակը նախատեսվում է չոր:

Նախագծում բնակարանները նախատեսվել է իրականացնել եռաֆազ մալուխով՝ ВВГнг-LS 5x10,0ք.մ կտրվածքով: Բնակարանային վահանակները տեղադրվում են հատակից 1.5-1.7մ բարձրության վրա:

Բնակելի շենքի ներքին էլեկտրամատակարարման ցանցը իրականացված է պղնձե, չիրկիզվող ուժային մալուխներով:

Բնակարաններում ընդհանուր նշանակության վարդակները և անջատիչները տեղադրվում են հատակից 0.8մ բարձրության վրա, իսկ խոհանոցում, կահույքի հատվածում և սանհանգույցներում՝ 1.2մ բարձրության վրա: Կոնդիցիոներների էլեկտրասնուցման վարդակները տեղադրվում են հատակից 2.3մ բարձրության վրա, որը կիրականացվի բնակարանային վահանակից առանձին ավտոմատ անջատիչով:

Բնակելի շենքի հարկերի հիմնական անցուղիներում, ավտոկայանատեղիում և աստիճանավանդակներում նախատեսված են վթարային լուսատուներ ներկառուցված մարտկոցներով:

Նախատեսված են նաև էվակուացիոն լուսատուներ՝ մարտկոցներով, տարահանման ուղղությունը ցույց տալու համար: Տվյալ լուսատուները նորմալ աշխատանքային ռեժիմում /լարման տակ/ գտնվում են անջատված վիճակում: Էլեկտրաէներգիայի ընդհատվելու դեպքում վերջիններս ավտոմատ կերպով միանում են իրենց մեջ ներկառուցված տեղային անկախ աղբյուրին՝ ապահովելով 2 ժամյա աշխատանքային ռեժիմ, որը բավարար է անհրաժեշտության դեպքում տարահանման համար:

Էլեկտրաուժային սարքավորումների կառավարումը նախատեսված է իրականացնել նախագծում նախատեսված ղեկավարման պահարանների և մագնիսական թողարկիչների միջոցով: Հրդեհի դեպքում նախատեսված է ծխահեռացման համակարգի ավտոմատ միացում, օդափոխության անջատում, վերելակի իջեցում առաջին հարկ: Վերելակների էլեկտրասնուցման և ղեկավարման արկղերը անհրաժեշտ է պատվիրել վերելակների հետ միասին և ծրագրավորել գործարանում:

Որպես անվտանգության լրացուցիչ միջոց նախագծված է հողանցման շղթա՝ 4Օհմ դիմադրությամբ:

Նախագծում նախատեսված է շանթապաշտպանության համակարգ, որը տեղակայված է տանիքում: Շանթապաշտպանությունը հողանցված է առանձին կոնտուրով:

Բոլոր էլեկտրամոնտաժային աշխատանքները կատարվելու է համապատասխան գործող ПУЭ-6,7-րդ հրատարակչության:

Բնակելի շենքի արտաքին էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն ՅԷՑ - ի տեխնիկական պայմանի: Բոլոր էլ. մոնտաժման աշխատանքները կատարվելու համաձայն ՀՀ գործող հակահրդեհային և էլ.տեխնիկական նորմերի և կանոնների:

Ցանկապատում. Շինհրապարակը ցանկապատվելու է ժամանակավոր ցանկապատով տրամատավոր թիթեղից 2,2 մ բարձրությամբ, դարպաս, դռնակով: ապահովված է լինելու արտաքին լուսավորությամբ:

Աղբահեռացում. Շահագործման փուլում աղբահեռացումը կատարվում է Նաիրի համայնքապետարանի հետ համաձայնեցված՝ պայմանագրային հիմունքներով: Տեղադրվելու են 10 հատ 1*1,5 չափերի աղբամաններ, ինչպես նաև տեսակավորման աղբամաններ:

Բարեկարգում, Կանաչապատում. Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է կառուցապատումից ազատ տարածքի բարեկարգում և կանաչապատում՝ 2740 մ² մակերեսով: Բարեկարգման և կանաչապատման նպատակով նախատեսվում է.

- կառուցապատումից ազատ տարածքի հարթեցում և բարեկարգում,
- տարածքը ազատ հատվածները 2740մ² /40%/ նախատեսվում է գազոնապատել: Տնկվելու են հետևյալ ծառատեսակները և թփերը. Սոսի թխկիատերև 21 հատ, Կատալպա Բիզոնոնիական 10հատ, Եղևնի կապույտ 1հատ, Վարդ պարկային 32 հատ, Յասաման 3 հատ, միաժամանակ գազոնապատվելու է կանաչապատման համար նախատեսված ամբողջ տարածքը՝ 2740քմ: /Հավելված 5/

10. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, ռիսկերը (շինարարության և շահագործման փուլ)

Գործունեության իրականացման ենթակա տարածքը գտնվում է Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Գ. Պոռոշյան, Գ. Չաուշի խճուղի 1/72 հասցեում: Նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կառաջանան շինարարության փուլում, կապված՝ հողային աշխատանքների, մեքենաների և շինտեխնիկայի շահագործումից առաջացող ծխագազերի արտանետումների, շինտեխնիկայի շահագործման և ավտոտրանսպորտի տեղաշարժի արդյունքում աղմուկի մակարդակի ավելացման, թափոնների կառավարման, բետոնային աշխատանքների հետ, որոնք կլինեն կարճաժամկետ:

Կառուցապատումը կատարվելու է ՀՀ գործող շինարարական նորմերին և պահանջներին համապատասխան, մասնավորապես ՀՀՇՆ 30.01-2014թ. «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական վայրերի հատակագծում և կառուցապատում», ՀՀՇՆ 30.01-2014թ. «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն», ՀՀՇՆ IV-11.03.-2002 «Ավտոկայանատեղեր», ՀՀՇՆ 22-01-2024թ. «Շինարարական կլիմայաբանություն»:

Ներկայացված հաշվետվությամբ նախատեսվում է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ՝ բնապահպանական կառավարման պլան:

10.1. Օդային ավազան.

Շինարարության փուլ: Գործունեության իրականացման շինարարության փուլում լինելու են օդային ավազան արտանետումներ՝ տրանսպորտային միջոցների աշխատանքի ընթացքում՝ ծխագազերի և հողային աշխատանքների (փորման, հարթեցման), ճանապարհների օգտագործման ժամանակ առաջացող փոշու տեսքով:

Գործունեության իրականացման ընթացքում օդային ավազանի հնարավոր աղտոտվածությունը լինելու է կարճաժամկետ և թույլատրելի նորմերի սահմաններում: Շինարարության ընթացքում, հատկապես չոր և շոգ եղանակներին, կատարվելու են շինհրապարակի և ճանապարհների փոշենստեցման աշխատանքներ՝ ջրցան մեքենայով:

Շահագործվող տեխնիկայի և շին հրապարակի անկազմակերպ փոշու արտանետումների հաշվարկի արդյունքները

Վնասակար նյութը	Տեսակարար արտանետումները, գ/կգ	Արտանետումները	
		գ/վրկ	տ/շին. ժամանակահատված: /4992ժամ/
CO (ածխածնի մոնօքսիդ)	36.4	0.0101	0,18
CH (ածխաջրածիններ)	0,243	0.00006	0.0012
NO ₂ (ազոտի օքսիդներ, երկօքսիդի հաշվարկով)	42.3	0.11	1,97

ՊՄ (պինդ մասնիկներ)	4.3	0.012	0,215
Ծծմբային անհիդրիդ		0,01	0.19968
Անկազմակերպ փոշու արտանետում		1,85	6,9

Շահագործման փուլ. Շահագործման փուլում արտանետումներ են կատարվելու կաթսայատնից: Ձմռանը ջեռուցման սեզոնը Կոտայքի մարզի Պոռչյան համայնքի համար կազմում է 156 օր համաձայն՝ ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական Կլիմայաբանություն» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ:

Ձմեռ- $332.2\text{մ}^3/\text{ժամ} \times 24 \text{ ժամ} \times 156 \text{ օր} = 1243\ 756,8\text{մ}^3$

Ամառ- $53.15\text{մ}^3/\text{ժամ} \times 24 \text{ ժամ} \times (366-156) \text{ օր} = 267\ 876\text{մ}^3$

ԸՆԴԱՄԵՆԸ՝ $1511632,8\text{մ}^3/\text{տարի}$, մեկ կաթսայի համար:

Աղտոտող նյութերի արտանետման հաշվարկը կաթսայատնից կատարվել է համաձայն՝ 2012թ. 23 հոկտեմբերի «ՄԻՆՉԵՎ 5,8 ՄՎտ ԴԻՎԵՔԱՅԻՆ ՀԶՈՐՈՒԹՅԱՄԲ ՊԻՆԴ, ՀԵՂՈՒԿ ԵՎ ԳԱԶԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔՈՎ ԱՇԽԱՏՈՂ ԿԱԹՍԱՑԱՏՆԵՐԻ ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» Հ. 268-Ա ՀՐԱՄԱՆԻ:

Վնասակար նյութերի արտանետումները մթնոլորտ ձմռանը կազմում են՝

$332,2\text{մ}^3/\text{ժամ} \times 9,3\text{կվտոմ}^3 = 3089,46\text{կվտ}$

- $\text{NOx } 0,252\text{գ/կվտ} \times 3089,46\text{կվտ} = 778,5\text{գ}/\text{ժամ} = 0,216\text{գ}/\text{վրկ}$
- $\text{CO } 0,108\text{գ/կվտ} \times 3089,46\text{կվտ} = 333,7\text{գ}/\text{ժամ} = 0,093\text{գ}/\text{վրկ}$

Վնասակար նյութերի արտանետումները մթնոլորտ ամռանը կազմում են՝

$53,15\text{մ}^3/\text{ժամ} \times 9,3\text{կվտոմ}^3 = 494,3\text{կվտ}$

- $\text{NOx } 0,252\text{գ/կվտ} \times 494,3\text{կվտ} = 124,56\text{գ}/\text{ժամ} = 0,0346\text{գ}/\text{վրկ}$
- $\text{CO } 0,108\text{գ/կվտ} \times 494,3\text{կվտ} = 53,4\text{գ}/\text{ժամ} = 0,015\text{գ}/\text{վրկ}$

Վնասակար նյութերի տարեկան արտանետումները մթնոլորտ կազմում են՝

$\text{Ջ} = 1511632,8\text{մ}^3/\text{տարի} \times 9,3 \text{ կվտ}/\text{մ}^3 = 14058185\text{կվտ}$

- $\text{NOx} = 0,252 \text{ գ/կվտ} \times 14058185 \text{ կվտ} = 3542662,6 \text{ գ}/106 = 3,54 \text{ տ}/\text{տարի}$
- $\text{CO} = 0,108 \text{ գ/կվտ} \times 14058185\text{կվտ} = 1518284 \text{ գ}/106 = 1,518 \text{ տ}/\text{տարի}$

Ընդհանուր արտանետումները /ամառ/ձմեռ/ $\text{NOx} = 0,0346/0,216\text{գ}/\text{վրկ}$, $3,54 \text{ տ}/\text{տարի}$, $\text{CO} = 0,015/0,093\text{գ}/\text{վրկ}$, $1,518 \text{ տ}/\text{տարի}$:

10.2. Հողային ռեսուրսներ.

Շինարարության փուլ Գործունեության ենթակա տարածքի հողի նպատակային նշանակությունը բնակավայրի է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման: Համաձայն «ԳԵՈՌԵՄԵՐՉ» ՍՊԸ-ի կողմից կատարված ուսումնասիրությունների՝ տարածքում առկա է հողաբուսաշերտ՝ հզորությունը՝ 0.2-0.5մ: Առաջին շերտը չպառակապնդված, խճամանրախճային կազմի, հազվադեպ հանդիպող մեծաբեկորներով, կավային և ավազային նյութի խառնուրդով՝ մինչև 30%, շինարարական, տեղ-տեղ կենցաղային թափոններով լիցքային գրունտներ են:

Կառուցապատման ժամանակ կատարվելու են հողային աշխատանքներ՝ հանույթ՝ 35000 մ³ ծավալի հողային աշխատանքներ, կատարվելու է հետ լիցք՝ 8600մ³: Մնացած 26400մ³, որից 700մ³

բուսահող է պահպանվելու է, 25700մ3 ծավալի հողային զանգվածը տեղափոխվելու է համայնքի կողմից հատկացված վայր: Բուսահողը պահվելու է տարածքում և օգտագործվելու է տարածքի բարեկարգման և կանաչապատման համար:

Հողային զանգվածն առաջանալու է հիմքերի փորման աշխատանքներից, անձրևաջրերի, ջրահեռացման համակարգերի անցկացման աշխատանքներից:

Հողային աշխատանքները կատարվելու են մեքենա-մեխանիզմներով և ձեռքի կտրող, հատող ժամանակակից գործիքներով: Հիմքերի փոստրակների գրունտների մեքենաներով մշակումը կատարվելու է 100մմ վեր, իսկ մինչև նախագծային նիշ՝ ձեռքով:

Հողային աշխատանքների ընթացքում կատարվելու է գրունտի չոր և թաց տոփանում: Անմիջապես հիմքերի տակ հողը մշակվում է ձեռքով՝ ձեռքի պարզագույն գործիքներով, փոքր մեխանիզմներով:

Շինարարության փուլում նախատեսվող գործունեության իրականացման հողային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցությունները մեղմելու, աղտոտումից պահպանելու նպատակով հաշվետվությունում նախատեսվում են միջոցառումներ: Գործունեությունն իրականացվելու է փակ ցանկապատված տարածքում:

Շահագործման փուլում հողային ռեսուրսների վրա ազդեցություն չկա:

10.3. Ջրային ռեսուրսներ.

Համաձայն կատարված ինժեներաերկրաբանական եզրակացության՝ Գրունտային ջրերն ըստ հորատանցքերի՝ մինչև 25.0մետր խորությամբ չեն բացահայտվել, համաձայն ֆոնդային նյութերի դրանք տեղադրված են 50.0 մետրից խորը:

Կառուցապատվող տարածքում չկան մակերևութային ջրային ավազաններ կամ առուներ: Ուստի մակերևութային և գրունտային ջրերի վրա ուղղակի ազդեցություն չի կանխատեսվում: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները ջրային ռեսուրսներ:

10.4. Կենսաբազմազանություն.

Գործունեության ենթակա տարածում բացակայում են ծառերը, ծառաթփերը, բուսածածկը համատարած չէ: Տարածք արդեն ենթարկվել է մարդու ազդեցությանը՝ կապված նոր բարձրահարկ շենքերի կառուցման և ընթացող շինարարության հետ:

Բուսական աշխարհ. նախատեսվող գործունեության ենթակա տարածքն արդեն ենթարկված է անտրոպոգեն ազդեցությունների, հարակից գտնվում են բնակելի տներ, նոր կառուցվող բնակելի շենքեր: Տարածքում բացակայում են ծառեր, թփեր, ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները:

Կենդանական աշխարհ. գործունեության հարակից տարածքներն արդեն կառուցապատված են, ուստի մարդկային գործոնի, երթևեկության՝ մեքենաների շարժի, աղմուկի պայմաններում տարածքում բացակայում են ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակները, ինչպես նաև կենդանիների բնադրավայրերը, միգրացիոն ուղիները:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է ճանապարհին հարակից կառուցապատվող հատվածում, ուստի կենսաբազմազանությանը հասցվող հնարավոր ռիսկեր չեն պարունակում, միջոցառումներ չեն նախատեսվում:

10.5. Թափոններ.

Գործունեության իրականացման հետևանքով շինարարության փուլում առաջանալու են կոշտ թափոններ.

- Շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբ: (վտանգավորության դաս IV դաս, ծածկագիր՝ 91200601 01 00 4)՝ 200 մ³ ծավալով:
- Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ /բացառությամբ խոշոր եզրաչափերի/ (ծածկագիր՝ 91200400 01 00 4) կառուցապատման փուլում՝ 12600 կգ/տարի:
- յուղոտված լաթեր(58200600 01 01 4)՝ 4կգ,
- փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող» (ծածկագիրը՝ 31401100 08 99 5)՝ 25700մ³:
- Լաքա-ներկանյութերի այլ թափոններ, ծածկագիր՝ (55502900 01 01 4)
- կարծրացված սոսնձի թափոններ(ծածկագիր՝ 55700600 01 01 4),
- Կտորների տեսքով սև մետաղներ պարունակող թափոններ՝ (ծածկագիր՝ 35131200 01 99 5) -8տ/տարի քանակով:

Այս կարգի թափոնները համաձայն՝ ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. դեկտեմբերի 25-ի N430-Ն և 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N342-Ն հրամանների՝ ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի՝ պատկանում են 4 և 5-րդ դասերին:

Շինաղբի, կենցաղային աղբի տեղափոխումը կատարվելու է համաձայն Նաիրի համայնքապետարանի համաձայնության:

Կենցաղային աղբի հաշվարկները

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M=n*m$$

m – 1 հերթափոխում կենցաղային աղբի ծավալն է մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տ

n – աշխատողների թիվն է

$$M=81*120= 9720 \text{ կգ/տ կամ } 8.9\text{կգ/օր/ըստ աշխատանքային օրերի թվի՝ } 1090 \text{ օր/}$$

Շինարարությունը տևելու է 3,5 տարի, հետևաբար

$$M=9720*3.5 =34020\text{կգ/տ կամ } 31.2 \text{ կգ/օր (1090 աշխատանքային օր)}$$

Շահագործման փուլում կենցաղային աղբի կուտակման համար կտեղադրվեն 10 հատ աղբի հեռացման աղբամաններ, նաև աղբի տեսակավորման աղբամաններ:

10.6. Պատմամշակութային և բնության հուշարձաններ.

Գործունեության ենթակա և մոտակա տարածքներում բացակայում են պատմամշակութային արժեք ունեցող պատմամշակութային և բնության հուշարձանները: Կառուցապատման ենթակա տարածքը չի առնչվում Պոռոջյան բնակավայրի գոյություն ունեցող մշակութային հուշարձանների, ինչպես նաև հատուկ պահպանվող տարածքների հետ:

Ուստի հնարավոր ազդեցություններ վերջիններիս վրա չի նախատեսվում:

Միաժամանակ՝ շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար:

Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:

10.7 Աղմուկ և թրթռում.

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿԸ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱԳԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈՒՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Հաշվարկների հիման վրա կարելի է եզրակացնել, որ բարձրահարկ շենքերին հարակից տարածքի համար 55 դԲ թույլատրելի չափի դեպքում շինարարական աշխատանքների աղմուկի առավելագույն մակարդակը (47 դԲ) գտնվում է թույլատրելի նորմայի սահմաններում: Շինարարության հրապարակում աշխատելու են տարբեր մեքենաներ և մեխանիզմներ, որոնց աղմուկի մակարդակի գումարային ազդեցությունը հնարավոր է գերազանցի սահմանված նորմերը: Սակայն դա լինելու է ոչ անընդմեջ, ժամանակավոր, քանի որ աղմուկ առաջացնող մեխանիզմներն աշխատելու են ոչ միաժամանակ: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցերեկային ժամերին, քաղաքային տրանսպորտի շարժական ակտիվ գոտում, հետևաբար շինհրապարակում աշխատող մեխանիզմների աղմուկը կտարալուծվի ընդհանուր աղմուկի մեջ:

Հաշվի առնելով աղմուկ առաջացնող շինարարական տեխնիկայի աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ:

Միաժամանակ համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը գործունեության և շինհրապարակին հարակից տարածքներում շատ ցածր կլինի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերից:

10.8 Արտակարգ իրավիճակներ.

Համաձայն «ԳԵՈՌԵՍԵՐՉ» ՍՊԸ-ի կողմից տրված ինժեներաերկրաբանական եզրակացության՝ տեղամասը երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների տեսանկյունից պիտանի է կապիտալ շինությունների, բարենպաստ է կառուցապատման համար:

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված բնական աղետների, սողանքների, հրդեհների, հեղուկ նյութերի արտահոսքի և շահագործվող շինտեխնիկայի վթարների հետ:

Այդ նպատակով հաշվետվությունում նախատեսվում են համապատասխան միջոցառումներ:

10.9. Մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները, ռիսկերը.

(Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն).

Սոցիալական գործոններ. Նախատեսված գործունեության տարածքը դուրս է մարդկանց տեղաշարժման ուղիներից, բնակչության առօրյա կենսագործունեության վրա որևէ ազդեցություն չի կարող ունենալ, ինչպես նաև տրանսպորտային հոսքերի խաթարումներ չի կարող առաջացնել:

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են աշխատողների արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված հրդեհների, հեղուկ նյութերի արտահոսքի, աշխատողների վնասվածքների և տեխնիկա-տրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում հնարավոր վթարների հետ:

Շինաշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարության ժամանակացույցը և աշխատանքի անվտանգության կանոններն՝ ըստ ՇՆևԿ-3-480* նորմերի: Մարդու առողջության և անվտանգության պահպանման նպատակով հաշվետվությունում նախատեսվում են միջոցառումներ:

Շինարարության ընթացքում բացվելու են նոր աշխատատեղեր: Շինարարության փուլում առավելագույն հերթափոխում աշխատելու է 81 մարդ, որից՝ 76 բանվոր, 5-ը ինժեներա-տեխնիկական անձնակազմ:

Աշխատելու են 6 օր՝ 8 ժամյա հերթափոխային գրաֆիկով:

Շինարարության ընթացքում բնակիչների իրավունքների սահմանափակում կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ կարգի խախտում չի նախատեսվում:

Էներգախնայողության և էներգաարդյունավետության

պահպանման նպատակով ավտոկայանտեղիի կառուցման ժամանակ հաշվի է առնվելու ՀՀ կառավարության N 426-Ն որոշմամբ սահմանված տեխնիկական կանոնակարգի պահանջները, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության բնակլիմայական պայմանները, սենքերում համապատասխան միկրոկլիմային ներկայացվող Հայաստանի հանրապետությունում գործող նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջները:

10.10 Լանդշաֆտ.

Կառուցապատումն իրականացվելու է բարձրահարկերով կառուցապատվող տարածքում: Գործունեության իրականացումն առաջացնելու է լանդշաֆտի լրացուցիչ ծանրաբեռնվածություն, բայց չի առաջացնելու տեսողական սահմանափակումներ :

Նախատեսվող կառույցը ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն է:

10.11 Բարեկարգում և Կանաչապատում.

Շենքի կառուցումից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների և վտանգավոր նյութերի հեռացում, բոլոր ժամանակավոր կառույցների ապամոնտաժում, տարածքի բարեկարգում:

Ռոռզման նպատակով ջրապահանջը որոշվում է СНиП 2.04.02-84-ի համաձայն, այսինքն, 1մ2 ռոռզման նպատակով անհրաժեշտ է 0,3-0,4լ ջուր, հետևաբար.

$$W = (M \times 0,4) \times m$$

Որտեղ, M – կանաչապատման ենթակա տարածքն է, ըստ կանաչապատման տեսակային կազմի, m – ռոռզման հաճախականությունը կախված սեզոնից և կլիմայական առանձնահատկությունից, հետևաբար,

$$W = 1000 \times 0,4 \times 25 = 10000 \text{ ւ/ջուր կամ } 10.0 \text{մ}^3/\text{տարի ջուր (տարվա կտրվածքով):}$$

11.Շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա վնասակար ազդեցության

բացառմանը, նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումները(Բնապահպանական կառավարման պլան)

Շրջակա միջավայրի պահպանման և վերջինիս բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնք կապված են լինելու կառուցապատման ընթացքում օդային ավազան արտանետումների, հողային և ջրային ռեսուրսների աղտոտման, կենսաբազմազանության, մարդու առողջության պահպանման, ինչպես նաև տրանսպորտային միջոցների և սարքավորումների աշխատելու ընթացքում հողային և ջրային ռեսուրսների մեջ վտանգավոր նյութերի՝ յուղերի հնարավոր ներթափանցման, թափոնների կառավարման հետ: Հաշվետվությունում նշված բնապահպանական միջոցառումների, մոնիթորինգի ծրագիրը ներկայացվում է նաև Բնապահպանական կառավարման պլանով՝ աղյուսակային տեսքով:

11.1. Օդային ավազան.

Օդային ավազան արտանետումների քանակը մեղմելու, մթնոլորտային օդի որակի վրա հնարավոր ազդեցությունը կրճատելու նպատակով նախատեսվում է.

- օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս,

- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով,

- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,

- շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ,

- հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ,

- շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով:

- ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով,

- բացառել տարածքում թափոնների բաց այրումը,

- օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում,

-բացառել անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը - սահմանափակել սալիկների հղկման տարածքները,

- փոշեղրսիչ և փոշեճնշիչ սարքավորումների կիրառում՝ համաձայն քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2026 թվականի հունվարի 15-ի «ՀՀՇՆ 13-05-2026 «շինարարական արտադրության կազմակերպում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի

N11-Ն ու Հայաստանի հանրապետության քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N07-Ն հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» N02-Ն հրամանի պահանջների:

Նշված միջոցառումների իրականացման արդյունքում օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի նախատեսվում:

Շահագործմանն փուլում օդային ավազան արտանետումները լինելու են տանիքում տեղակայված կաթսայատան աշխատանքից, որոնք փոքր հզորությունների պատճառով նորմայից զգալիորեն ցածր են:

11.2. Հողային ռեսուրսներ.

Հողային ռեսուրսներն աղտոտումից պահպանելու համար նախատեսվում է.

- հողի բերրի շերտի հանել և պահել համաձայն՝ ՀՀ կառավարության 02.1.2017թ. «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1404-Ն որոշման պահանջներին համապատասխան,
- բերրի շերտը հանելու, պահեստավորելու և պահպանելու ընթացքում ձեռնարկվում են միջոցներ, որոնք բացառում են դրա որակական հատկանիշների վատթարացումը,
- նախքան բերրի շերտի հանելը՝ հողի մակերեսը մաքրել խոշոր քարերից, թփերից, կոճղերից,
- հողի բերրի շերտը օգտահանել, հեռացնել ապարները, պահեստավել առանձին, ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու համար պահեստավորված հողաթմբերը ծածկել խոտաբույսերով կամ հողաթմբերի ամրացնել, ծածկել անջրթափանց թաղանթով,
- հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է շինհրապարակում, առանձնացված վայրում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,
- շինարարական աշխատանքների ընթացքում հանված հողային գրունտի մասն օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով,
- շինհրապարակն ապահովված է կլինի արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար,
- շինարարական նյութերը կտեղադրվեն հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա,
- նվազագույնի է հասցվելու շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը,
- ավտոմեքենաները շինհրապարակից դուրս են գալու միայն մաքուր վիճակում՝ շրջակա տարածքը չաղտոտելու նպատակով,
- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կկատարվի տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,
- այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար տեղադրվելու է բետոնյա սալեր,
- մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսքի դեպքում, փոխված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր, այն փոխարինելով նորով,
- մեքենաների անիվների լվացումը կատարել անիվների լվացման հարթակում,
- բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը կատարել մինչև վերջիններիս

շինհրապարակից դուրս գալը:

Շահագործման փուլում հողային ռեսուրսների վրա ազդեցություն չի նախատեսվում, ուստի բնապահպանական միջոցառումներ չեն նախատեսվում:

11.3. Ջրային ռեսուրսներ.

Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու նպատակով նախատեսվում է.

- փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր,

- անձրևաջրերը և շինարարական հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող պարզարան,

- ջրցանման համար կօգտագործվի միայն տեխնիկական որակի ջուր և պարզարանում կուտակված ջուրը,

- պարզարանում մեխանիկական նստեցման հետևանքով առաջացած տիղմը՝ որպես շինադր, ժամանակ առ ժամանակ կտեղափոխվի աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով,

- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կետերում,

- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով,

- բետոնանյութի լցվածությունն ապահովել այնպես, որպեսի բետոնանյութը տեղափոխման ժամանակ չթափվի ճանապարհներին՝ երթեկությանը չխոչընդոտելու և ասֆալտածածկը չվնասելու համար:

Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվում է.

- շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող սանհանգույցից՝ բիոզուգարաններից,

- զուգարանները միացվելու են տարածքում գոյություն ունեցող քաղաքային ջրահեռացման ցանցին միացված կոյուղագծին:

Շահագործման փուլում ջրահեռացման համակարգը միացվելու է գոյություն ունեցող քաղաքային ջրահեռացման ցանցին:

11.4. Կենսաբազմազանություն.

Կենսաբազմազանության պահպանման նպատակով նախատեսվում է.

- գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում՝ դրանց պահպանության նպատակով, ընկերությունը պետք է տեղեկացնի համապատասխան պատասխանատու գերատեսչություններին,

- աշխատանքներն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին՝ տարածքում հնարավոր գոյություն ունեցող որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար:

- խախտված հողաշերտի հնարավորինս արագ վերականգնում՝ տարածքում կենդանական աշխարհի տեղաշարժը չխաթարելու նպատակով:

- հնարավորինս նվազեցնել տարածքի գիշերային լուսավորությունը՝ կենդանիների որոշ տեսակների բնականոն վարքին չխանգարելու նպատակով:

11.5. Թափոններ.

Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ պահել թափոնների կուտակումներից,
- շին հրապարակի տարածքում կհատակեցվի շին աղբի նախնական կուտակման վայրը,
- շինարարական թափոնները՝ շինաղբ, բետոնյա մնացորդները և այլն, կհավաքվեն համապատասխան տարաների կամ պոլիէթիլենային պարկերի մեջ, կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր՝ Նաիրի համայնքապետարանի հետ համաձայնեցված վայր, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր,
- մետաղական մասերն կառանձնացվեն և որպես մետաղի ջարդոն կհանձնվեն հատուկ մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,
- շինաղբի տեղափոխումը կատարել փակ ծածկով ապահովված բեռնատարներով կամ բեռնատարները ծածկել անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,
- կառուցապատման փուլում կենցաղային աղբը կուտակվելու է մետաղյա կամ պլաստիկ աղբահավաք տարողությունների մեջ,
- կենցաղային աղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,
- բացառել աղբի կուտակումը շիհրապարակից դուրս՝ այլ բնակելի և հասարակական տարածքներում,
- շինարարական աշխատանքների ավարտից հետո շինարարական նյութերի մնացորդները, վտանգավոր նյութերը հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից:

Ճահագործման փուլում կենցաղային աղբի կուտակման համար նախատեսվում է տեղադրել 10 հատ 1,5x1մ³ տարողության պլաստմասե կամ մետաղյա աղբամաններ, ինչպես նաև տեսակավորման աղբամաններ:

11.6. Պատմամշակութային և բնության հուշարձաններ.

Շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:

11.7. Աղմուկ և թրթռում.

Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով հաշվետվությունում նախատեսվում են համապատասխան բնապահպանական միջոցառումներ, որոնց կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցում ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- կառուցապատման տարածքում ձայնակլանիչ նյութերի և կոնստրուկցիաների կիրառում,
- շինարարական աշխատանքներում ներգրավվել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ,
- տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործել սարքին վիճակում,
- պարբերաբար ստուգել և կարգաբերել տրանսպորտային միջոցների շարժիչները,
- բացառել շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ,
- օգտագործվող շին տեխնիկան և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով,
- պահպանել աղմուկի, վիբրացիայի, արտանետվող գազերի թույլատրելի նորմերը, կատարել չափագրում,
- հնարավորինս բացառել աղմուկ և թրթռում առաջացնող մի քանի մեխանիզմների միաժամանակյա աշխատելու դեպքերը,
- շինհրապարակում աղմուկի մակարդակը գերազանցելու դեպքում աշխատողներին ապահովել ականջակալներով:

Շահագործման փուլում նախատեսվում է.

- ձայնամեկուսիչ, ձայնակլանիչ, թրթռամարիչ նյութերի օգտագործում՝ առաջնորդվելով համապատասխան մարմինների եզրակացություններով:

11.8. Արտակարգ իրավիճակներ.

Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- կառույցների հիմքերի փոսորակները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ պարտադիր է ինժեներ-երկրաբանի կողմից հիմնափոսի գնումը և համապատասխան մասնագետի (երկրաբան) կողմից կազմված եզրակացությունը,
- կտեղադրվեն տեղեկատվական ցուցանակներ, որը ներառելու է շենքի նախագծողի, կապալառուի և այլ պատասխանատու անձանց (հեռախոսահամար), շինթույլտվության, շինարարության սկզբի և ավարտի վերաբերյալ տեղեկատվություն:
- շինհրապարակը կկազմակերպվի հակահրդեհային անվտանգության պաշտպանության կանոններին համապատասխան, տեղադրել ջրի բաք՝ հրդեհամարման նպատակով,
- շինհրապարակն ապահովված է լինելու հակահրդեհային վահանակով, հակահրդեհային կրակմարիչներով, տեսահսկման և ազդանշանային համակարգերով,
- շինհրապարակն, ինչպես նաև բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունները ժամանակ առ ժամանակ կմաքրվեն հրդեհավտանգ և պայթուցավտանգ թափոններից և աղբից,

- հակահրդեհային միջտարածությունները չօգտագործել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,
- բաց են լինելու նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները, տեղադրվելու են դրանց մոտեցման համապատասխան ցուցանակներ,
- տեղադրվելու են ձայնային ազդանշաններ, հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ՝ վթարների կանխարգելման համար,
- հեղուկ և վտանգավոր նյութերը պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,
- ավտոմոբիլային ճանապարհների վրա բոլոր տեսակի աշխատանքները կատարել «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» օրենքի 12 հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ դրանց տնօրինողների և շահագրգիռ այլ մարմինների հետ համաձայնեցված պայմաններով,
- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են:

Շահագործման փուլ.

- պահպանվելու են հակահրդեհային մուտքերը՝ հրշեջ մեքենաների շրջադարձի համար,
 - դռները լինելու են հակահրդեհային՝ ինքնափակվող,
 - աստիճանավանդակները բնական չծխապատվող,
 - ինժեներական հաղորդակցությունները անցնելու են մեկուսացված հորաններով՝ մշակված հակահրդեհային խտացուցիչներով:

Բացի այդ.

- ստորգետնյա հարկում նախատեսված են երկակի նշանակությամբ ավտոկայանատեղի, որն անհրաժեշտության դեպքում ծառայելու է բնակչության համար որպես պարզագույն թաքստոց: Ավտոկայանատեղին ապահովված է լինելու սանհանգույցներով՝ նաև սահմանափակ կարորոդությունների անձանց համար, օդափոխության, լուսավորության/նաև վթարային/ համակարգերով:

11.9. Մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները, ռիսկերը. (Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն).

Շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.

- պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, շինհրապարակում՝ անվտանգության տեխնիկայի կանոնները անցումները, վտանգավոր զոնաները կցանկապատվեն, ՀՀ Առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,
 - ապահովվել աշխատողների անվտանգությունը բարձրության վրա,
 - ապահովել կապալառուի կողմից նախագծով նախատեսված բոլոր աշխատանքների պատշաճ իրականացումը,
 - մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդներն անցնելու են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների,
 - բանվորական խմբերը լինելու են բազմապրոֆիլ և մասնագիտացված, անցկացվելու են ուսուցման և հրահանգավորման դասընթացներ,
 - ստուգել առասանիչ բանվորների գիտելիքները, տեղադրել առասանման եղանակների և ձևերի նկարագրությամբ ցուցանակներ,

- աշխատողների համար ապահովել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական և պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ, կոշիկ և այլն), Էլեկտրական սարքավորումների հետ աշխատողները՝ դիէլեկտրիկ գորգով և ձեռնոցներով,
- աշխատողներին ապահովել սանիտարական և հանգստի պայմաններով (հանգստի սենյակ, հանդերձարան և այլն)՝ անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան, ջեռուցիչ և այլն),
- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, վտանգն ազդարարող տեսողական պաստառներ, ճանապարհային երթևեկության, ինչպես նաև կողմնակի մարդկանց մուտքն արգելող նշաններ,
- վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառել գործնության վայրում խոտանված բեռնիչ սարքերի կուտակումները,
- վերահսկել մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառել մեքենաների կուտակումները,
- նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը՝ հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,
- բացառել ավտոամբարձիչի սլաքի աշխատանքը՝ սահմանազատված սահմանից դուրս,
- բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ օգտագործվող բեռնամբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին, երթևեկության արագությունը շինհրապարակում չպետք է գերազանցի 5կմ/ժ,
- շինհրապարակի լուսավորությունը ապահովել հավասարաչափ՝ լուսավորության 2 յուքսից ոչ պակաս, անհրաժեշտության դեպքում տեղադրել լրացուցիչ լուսավորման սարքեր,
- վարել տեխնիկական հսկողության ամփոփիչ և անհատական մատյաններ՝ տեխնիկական վերահսկողության իրականացման համար:

11.10.Սոցիալական գործոններ. Շինարարության փուլում հնարավոր սոցիալական խնդիրներից խուսափելու համար նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները կատարել սահմանված ժամերին՝ ցերեկը,
- բացառել շինհրապարակից դուրս կենցաղային աղբի և շինաղբի, մեքենաների կուտակումները,
- գործելու է բողոքների արձագանքման ընթացակարգը:

11.11. Էներգախնայողություն և Էներգաարդյունավետություն.

Էներգախնայողության ապահովման նպատակով նպատակով շենքը կկառուցվի.

- շենքի արտաքին պատերը կերեսապավեն 200մմ թեթև բետոնով լցոնված պեմզաբետոնե բլոկներով, 80մմ հաստության ջերմամեկուսացված հրակայուն հանքային բամբակով, ինչպես նաև երսապատվելու են ֆասադային օդափոխվող կախովի թեթև երեսապատման տարրերով, անջրաթափանց, գոլորշակայուն և գոլորշամեկուսիչ, ջերմամեկուսիչ նյութերով,
- ընդհանուր մուտքերն ու ելքերը լինելու են ջերմամեկուսիչ և հերմետիկ փակվող դռներով,

- լուսավորությունը կատարվելու է լեդ տեսակի լամպերով՝ 15Վտ հզորությամբ:

11.12. Լանդշաֆտ.

Լանդշաֆտի պահպանման համար նախատեսվում է.

- բոլոր փուլերում բացառել նախատեսվող տարածքից դուրս կառուցապատման այլ աշխատանքները,
- պահպանել կառուցապատման նախագծային լուծումները, բացառելով լրացուցիչ տարածքների օգտագործումը,
- շինարարական աշխատանքների ավարտից հետո՝ հնարավորության դեպքում ըստ փուլերի կատարել տարածքի բարեկարգում.
- հնարավորինս վերականգնել տարածքի լանդշաֆտը, մաքրել թափոններից:

11.13. Բարեկարգում և Կանաչապատում.

Բարեկարգման և կանաչապատման նպատակով նախատեսվում է.

- կառուցապատումից ազատ տարածքի հարթեցում և բարեկարգում,
- տարածքի ազատ հատվածները 2740մ² /40%/ նախատեսվում է կանաչապատել հետևյալ ծառատեսակներով և թփերով. Սոսի թխկիատերև 21 հատ, Կատալպա Բիգնոնիական 10հատ, Եղևնի կապույտ 1հատ, Վարդ պարկային 32 հատ, Ցասաման 3 հատ, միաժամանակ գազոնապատվելու է կանաչապատման համար նախատեսված ամբողջ տարածքը՝ 2740քմ:

12. Նախատեսվող գործունեության ազդեցության մշտադիտարկման ծրագիրը (Մոնիթորինգ).

Մոնիթորինգը՝ ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարման, դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի և հսկողություն իրականացնող այլ մարմինների կողմից նախատեսվող կանոնավոր հսկողություն է: Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված մոնիթորինգ:

Այդ նպատակով նախատեսվում է.

- համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում,
- բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության, տեխնիկական վերահսկողության իրականացում՝ ամենօրյա ռեժիմով,
- բոլոր աշխատողների աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ընթացակարգի վերահսկում, ժամանակին Պատվիրատուին և/կամ նախագծային կազմակերպությանը տեղեկացնել նկատած անհամապատասխանությունների մասին,
- շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի պահպանման վերահսկում,
- հակահրդեհային պահանջների՝ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերի համապատասխանության ապահովման վերահսկում,
- համապատասխան պայմանագրերի հիման վրա, թափոնների տեղափոխման վերահսկում,
- ամբարձիչի ժամանակի և բեռնունակության օգտագործման պարբերաբար և

դիտողական ստուգում,

- շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումներ՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառելու նպատակով,

- արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձի նշանակում, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում,

- շինարարության իրականացման ժամանակացույցի պահպանման հսկողություն,

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվելու են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

13. Բողոքների ընթացակարգ

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կներդրվի բողոքների արձագանքման մեխանիզմ (ԲԱՄ), որը հիմնականում ուղղված կլինի շահագրգիռ կողմերի և ազդակիր հասարակության կողմից իրականացվող գործունեության վերաբերյալ դժգոհությունների ստացմանը, գնահատմանն ու լուծմանը:

Շինարարական բոլոր տեղամասերում ապահովվելու է կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը:

14. Բնապահպանական միջոցառումների (բնապահպանական կառավարման) պլան

<p>1</p>	<p>Օդային ավազան</p>	<p>Օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս, - ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով, - ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով, - շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ, - հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ, - շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով: - ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները 	<p>Կապալառու</p>	<p>«ՎԻ-ԷՅՋ-ԷՍ» ՍՊԸ</p>
-----------------	-----------------------------	--	-------------------------	------------------------

		<p>ծածկել շինարարությանը համապատասխան քարձրությանը անթափանց թաղանթով,</p> <ul style="list-style-type: none"> - բացառել տարածքում թափոնների բաց այրումը, - օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում, -բացառել անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը - սահմանափակել սալիկների հղկման տարածքները, - փոշեռսիչ և փոշեճնշիչ սարքավորումների կիրառում՝ համաձայն քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2026 թվականի հունվարի 15-ի «ՀՀՇՆ 13-05-2026 «շինարարական արտադրության կազմակերպում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N11-Ն ու Հայաստանի հանրապետության քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N07-ն հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» N02-Ն հրամանի պահանջների: 		
2	Հողային ռեսուրսներ	<p>Գործունեության իրականացման հետևանքով հողային ռեսուրսներն աղտոտումից պահպանելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - հողի բերրի շերտի հանել և պահել համաձայն՝ ՀՀ կառավարության 	Կապալառու	«ՎԻ-ԷՅՁ-ԷՍ» ՍՊԸ

		<p>02.1.2017թ. «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1404-Ն որոշման պահանջներին համապատասխան,</p> <ul style="list-style-type: none"> - բերրի շերտը հանելու, պահեստավորելու և պահպանելու ընթացքում ձեռնարկվում են միջոցներ, որոնք բացառում են դրա որակական հատկանիշների վատթարացումը, - նախքան բերրի շերտի հանելը՝ հողի մակերեսը մաքրել խոշոր քարերից, թփերից, կոճղերից, - հողի բերրի շերտը օգտահանել, հեռացնել ապարները, պահեստավել առանձին, ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու համար պահեստավորված հողաթմբերը ծածկել խոտաբույսերով կամ հողաթմբերի ամրացնել, ծածկել անջրթափանց թաղանթով, - հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է շինհրպարակում, առանձնացված վայրում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով, 		
--	--	--	--	--

		<ul style="list-style-type: none"> - շինարարական աշխատանքների ընթացքում հանված հողային գրունտի մասն օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով, - շինհրապարակն ապահովված է կլինի արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար, - շինարարական նյութերը կտեղադրվեն հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա, - նվազագույնի է հասցվելու շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը, - ավտոմեքենաները շինհրապարակից դուրս են գալու միայն մաքուր վիճակում՝ շրջակա տարածքը չաղտոտելու նպատակով, - շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կկատարվի տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում, - այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար տեղադրվելու է բետոնյա սալեր, - մեքենաներից և սարքավորումներից 		
--	--	--	--	--

		<p>վառելիքի և/կամ քայուղերի արտահոսքի դեպքում, փռված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր, այն փոխարինելով նորով,</p> <ul style="list-style-type: none"> - մեքենաների անիվների լվացումը կատարել անիվների լվացման հարթակում, - բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը կատարել մինչև վերջիններիս շինհրապարակից դուրս գալը: <p>Շահագործման փուլում հողային ռեսուրսների վրա ազդեցություն չի նախատեսվում, ուստի բնապահպանական միջոցառումներ չեն նախատեսվում:</p>		
3	Ջրային ռեսուրսներ	<p>Գործունեության իրականացման ընթացքում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են.</p> <ul style="list-style-type: none"> - փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր, - անձրևաջրերը և շինարարական հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող պարզարան, - ջրցանման համար օգտագործվելու է միայն տեխնիկական որակի ջուր և պարզարանում կուտակված ջուրը, 	Կապալառու	«ՎԻ-ԷՅՁ-ԷՍ» ՍՊԸ

	<p>Շահագործման փուլ</p>	<ul style="list-style-type: none"> - պարզարանում մեխանիկական նստեցման հետևանքով առաջացած տիղմը՝ որպես շինաղբ, ժամանակ առ ժամանակ տեղափոխվելու է աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով, - շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով, - բետոնանյութի լցվածությունն ապահովել այնպես, որպեսի բետոնանյութը տեղափոխման ժամանակ չթափվի ճանապարհներին՝ երթեկությանը չխոչընդոտելու և ասֆալտածածկը չվնասելու համար: <p>Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվելու է.</p> <ul style="list-style-type: none"> - շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում գոյություն ունեցող սանհանգույցից, -բիոզուգարանի մաքրումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով, -շինաշխատանքների ավարտից հետո այն ապամոնտաժվելու է և տեղափոխվելու է կապալառու կազմակերպության կողմից: <p>Շահագործման փուլ.</p> <p>Ջրամատակարարման համակարգերը միացվելու են բնակավայրի ջրատարին:</p> <ul style="list-style-type: none"> - Կոմունալ-կենցաղային հոսքաջրերի և կեղտաջրերի հեռացումը կատարվելու է 		
--	--------------------------------	--	--	--

		տեղադրվող հորի միջոցով: Հորի մաքրումը կատարվելու է մասնագիտացված կամակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Մաքրման հաճախականությունը կախված է հորի լցվածությունից, որը վերահսկվում է դիտահորի միջոցով:		
4	Թափոններ	<p>Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> -շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ է պահվելու թափոնների կուտակումներից, -շին հրապարակի տարածքում հստակեցվելու է շին աղբի նախնական կուտակման վայրը, շինարարական թափոնները՝ շինաղբ, բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, կհավաքվեն անջրթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայրում, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր, -շինաղբի տեղափումը կատարվելու է փակ ծածկով ապահովված բեռնատարներով, -կենցաղային աղբի և շինաղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության, - շինարարության և շահագործման փուլերում կենցաղային աղբը հավաքվելու է տարածքում տեղադրված աղբարկղերի մեջ և հատուկ 	Կապալառու	«ՎԻ-ԷՅՋ-ԷՍ» ՍՊԸ

		<p>աղբահավաք ծառայությունների կողմից մեքենաներով տեղափոխվելու է նախատեսված աղբավայր,</p> <p>-բացառվելու է աղբի կուտակումը շփիրապարակից դուրս՝ այլ հասարակական տարածքներում,</p> <p>շինարարական նյութերի մնացորդները(մետաղական մասեր) և վտանգավոր նյութերը և թափոնները հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից:</p> <p>Շահագործման փուլում կենցաղային աղբի կուտակման համար նախատեսվում է տեղադրել 10 հատ 1,5x1մ³ տարողության պլաստմասե կամ մետաղյա աղբամաններ, ինչպես նաև տեսակավորման աղբամաններ:</p> <p>Կենցաղային աղբի տեղափոխումը կատարվելու է պայմանագրային հիմունքներով:</p>		
5	Աղմուկ և թրթռում	<p>Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.</p> <p>-շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու է ցերեկային ժամերին,</p> <p>-կառուցապատման տարածքում ձայնակլանիչ նյութերի և կոնստրուկցիաների կիրառում,</p> <p>շինարարական աշխատանքներում ներգրավվելու են ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ,</p>	Կապալառու	«ՎԻ-ԷՅՋ-ԷՍ» ՍՊԸ

		<p>-տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործվելու են սարքին վիճակում,</p> <p>-պարբերաբար ստուգվելու և կարգաբերվելու են տրանսպորտային միջոցների շարժիչները, բացառել շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը քնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ,</p> <p>-օգտագործվող շին տեխնիկան և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով,</p> <p>- պահպանել աղմուկի, վիբրացիայի, արտանետվող գազերի թույլատրելի նորմերը: Շահագործման փուլում նախատեսվում է.</p> <p>- օդափոխման և օդի լավորակման համակարգերում աղմուկի խլացուցիչների կիրառում,</p> <p>- օգտագործվող ձայնամեկուսիչ, ձայնակլանիչ, թրթռամարիչ նյութերի օգտագործում համապատասխան մարմինների եզրակացությունների հիման վրա:</p>		
6	<p>Արտակարգ իրավիճակներ</p>	<ul style="list-style-type: none"> • կառույցների հիմքերի փոսորակները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո` պարտադիր է ինժեներ-երկրաբանի կողմից հիմնափոսի զննումը և համապատասխան մասնագետի(երկրաբան) կողմից կազմված եզրակացությունը, • կտեղադրվեն տեղեկատվական ցուցանակներ, որը ներառելու է շենքի նախագծողի, Կապալառուի և այլ պատասխանատու անձանց (հեռախոսահամար), շինթույլտվության, 	<p>Կապալառու</p>	<p>«ՎԻ-ԷՅՋ-ԷՍ» ՍՊԸ</p>

	<p>շինարարության սկզբի և ավարտի վերաբերյալ տեղեկատվություն,</p> <ul style="list-style-type: none"> • շինհրապարակը կկազմակերպվի հակահրդեհային անվտանգության պաշտպանության կանոններին համապատասխան, • շինհրապարակն ապահովված է լինելու հակահրդեհային կրակմարիչներով, տեսահսկման և ազդանշանային համակարգերով, հակահրդեհային միջոցառումների վահանակներով, • շինհրապարակն, ինչպես նաև բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունները ժամանակ առ ժամանակ մաքրվելու են հրդեհավտանգ և պայթուցավտանգ թափոններից և աղբից, • հակահրդեհային միջտարածությունները չեն օգտագործվելու նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար, • բաց են լինելու նախատեսված ջրադրյուրների ճանապարհները, տեղադրվելու են դրանց մոտեցման համապատասխան ցուցանակներ, • տեղադրվելու են ձայնային ազդանշաններ, հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ՝ վթարների կանխարգելման համար, • հեղուկ և վտանգավոր նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ 		
--	--	--	--

	<p>Շահագործման փուլ.</p>	<p>օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը քացառելու համար,</p> <ul style="list-style-type: none"> • մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են: • ստորգետնյա հարկերը ծառայելու են որպես թաքստոց՝ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանական նպատակներով, • նկուղն ապահովված է լինելու հակահրդեհային ավտոմատ համակարգով, լվացարանով, ստորգետնյա հատվածում թաքստոցի համար նախատեսվում է վթարային ելք, • շենքը ապահովված է լինելու հակահրդեհային հիդրատներով, օդափոխության, ավտոմատ հրշեջ ազդանշանային՝ հակաժխային, արտածման համակարգերով, էվակուացիոն ուղիներով և ելքերով, • պահպանվելու են հակահրդեհային մուտքերը՝ հրշեջ մեքենաների շրջադարձի համար, • Շենքում նախատեսվում է ընդհանուր հակահրդեհային պոմպակայան և պաշարապահ ջրավազան 144 մ3 ծավալով: • աստիճանավանդակը, դռները լինելու են հակահրդեհային: 		
--	---------------------------------	---	--	--

7	<p>Մարդու առողջություն, աշխատանքի կազմակերպում և անվտանգություն</p>	<p>Շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, շինհրապարակում պահպանվելու են անվտանգության տեխնիկայի կանոնները անցումները, վտանգավոր զոնանները ցանկապատվելու են, - պահպանել ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները, -պահպանել Առողջապահության նախարարի 28 մարտի 2017թ. «ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ» N 2.2.4-016-17 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի N 82 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 12-Ն հրամանի պահանջներ, - ապահովվել աշխատողների անվտանգությունը բարձրության վրա, - մինչև աշխատանքների սկիզբը բոլոր 	Կապալառու	«ՎԻ-ԷՅՋ-ԷՍ» ՍՊԸ
---	---	---	-----------	-----------------

	<p>աշխատողները, այդ թվում նաև վարորդներն անցնելու են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների,</p> <ul style="list-style-type: none"> - բանվորական խմբերը լինելու են բազմապրոֆիլ և մասնագիտացված, անցկացվելու են ուսուցման և հրահանգավորման դասընթացներ, - ստուգվելու և ատեստավորվելու են առասանիչ բանվորների գիտելիքները, տեղադրվելու են առասանման եղանակների և ձևերի նկարագրությամբ ցուցանակներ, - ապահովվել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական և պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ, կոշիկ և այլն), էլեկտրական սարքավորումների հետ աշխատողները՝ դիէլեկտրիկ գորգով և ձեռնոցներով, - աշխատողների համար նախատեսել սանիտարական և հանգստի պայմաններ (հանգստի սենյակ, հանդերձարան և այլն), որն ապահովված է լինելու անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան, ջեռուցիչ և այլն), - շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, վտանգն ազդարարող տեսողական պաստառներ, ճանապարհային երթևեկության, ինչպես նաև կողմնակի մարդկանց մուտքն արգելող նշաններ, 		
--	--	--	--

	Շահագործման փուլ	<ul style="list-style-type: none"> - վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառելով գործնության վայրում խոտանված բեռնիչ սարքերի կուտակումները, - վերահսկել մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառվելու են մեքենաների կուտակումները, - նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը՝ հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով, - ավտոմեքենաները շինհրապարակից դուրս են գալու միայն մաքուր վիճակում՝ շրջակա տարածքը չաղտոտելու նպատակով, - բացառել ավտոամբարձիչի սլաքի աշխատանքը՝ սահմանազատված սահմանից դուրս, - բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ օգտագործվող բեռնամբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին, երթևեկության արագությունը շինհրապարակում չպետք է գերազանցի 5կմ/ժ, - տեղադրվելու են լրացուցիչ լուսավորման սարքերի՝ շինհրապարակի լուսավորության համար, - շինհրապարակի լուսավորությունը պետք է ապահովի հավասարաչափ՝ լուսավորության 2 յուքսից ոչ պակաս, 		
--	------------------	--	--	--

		<ul style="list-style-type: none"> - շենքի ներսում եռակցման և ներկման աշխատանքները կատարել օդափոխության պայմաններում, հոսանքատար մասերի մեկուսացում, - վարել տեխնիկական հսկողության ամփոփիչ և անհատական մատյաններ՝ տեխնիկական վերահսկողության իրականացման համար, - շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացնել 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան, աշխատողներն ունենալու են համապատասխան բանվորական արտահագուստ: Շենքն ապահովված է լինելու. - ապահովված է լինելու հաշմանդամների պահանջմունքին հարմարեցվող ունիվերսալ, շարժական տարրերով, - վերգետնյա և ստորգետնյա անցումներ, թերահարթակներ, - հաշմանդամների համար նախատեսված սան հանգույցով, - տարածքի մուտքը կահավորված է լինելու տարածքի վերաբերյալ հաշմանդամների համար մատչելի տեղեկատվության տարրերով: 		
8	Էներգաարդյունավետությոն և Էներգախնայողություն	<p>Շենքը ներառյալ ստորգետնյա հարկերը (թաքստոց) կահավորելիս առաջնորդվելու են ՀՀ կառավարության 12.04.2018թ N426-Ն որոշմամբ սահմանված պահանջներով, -շենքի արտաքին պատերը</p>	Կապալառու	«ՎԻ-ԷՅՁ-ԷՍ» ՍՊԸ

		<p>երեսապատվելու են սրբատաշ ֆայբերգեմենտային սալիկներով, պահպանելով հրակայուն, ոչ ջրաթափանց և հողմաջրապաշտպան, գոլորշակայուն և գոլորշամեկուսիչ, ջերմամեկուսիչ նյութերի նորմերը,</p> <ul style="list-style-type: none"> - արտաքին լուսավորության, օդափոխության, ծխահեռացման համակարգերով, հակահրդեհային միջոցներով՝ կրակմարիչներով, - էլեկտրամատակարարման և ծխահեռացման փականների ավտոմատ անջատիչներով, օդափոխության, հակածխային օդափոխության արտածման համակարգերով, - ջերմամեկուսիչ, օդափոխիչ, էներգախնայող բազմաթիվ այլ սարքավորումներով: 		
9	Պատմամշակութային և բնության հուշարձաններ	<p>Շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:</p>	Կապալառու	«ՎԻ-ԷՅՋ-ԷՍ» ՍՊԸ
10	Սոցիալական	<p>Շինարարության փուլում հնարավոր սոցիալական խնդիրներից խուսափելու համար նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - շինարարական աշխատանքները կատարել սահմանված ժամերին՝ ցերեկը, - բացառել շինհրապարակից դուրս աղբի և 	Կապալառու	«ՎԻ-ԷՅՋ-ԷՍ» ՍՊԸ

		մեքենաների կուտակումները, - գործելու է բողոքների արձագանքման ընթացակարգը:		
11	Լանդշաֆտ	Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում. - շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են, - շինարարական հրապարակը մաքրվելու է թափոններից, վերականգնվելու է տարածքը, - կատարվելու են գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:	Կապալառու	«ՎԻ-ԷՅՋ-ԷՍ» ՍՊԸ
12	Բարեկարգում և կանաչապատում	Բարեկարգման և կանաչապատման նպատակով նախատեսվում է. - կառուցապատումից ազատ տարածքի հարթեցում և բարեկարգում, ներբակային ճանապարհների կառուցում: Կանաչապատում. կատարվելու է գործունեության ենթակա տարածքի կանաչապատում, որի պահպանման համար նախատեսվում է. - կանաչ զանգվածի ոռոգում՝ բուսականության աճը և կաչողականությունն ապահովելու նպատակով, - նորատունկ բուսականության, ծառերի չկաչելու դեպքում նոր ծառատեսակներով փոխարինում: Կանաչապատ տարածքի ոռոգումը կատարվելու է գոյություն ունեցող ոռոգման ցանցից՝ պոլիպրոպիլենե խողովակներով՝ կաթիլային եղանակով:	Կապալառու	«ՎԻ-ԷՅՋ-ԷՍ» ՍՊԸ

13	<p>Կենսաբազմազանություն</p>	<p>Կենսաբազմազանության նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> -գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում՝ դրանց պահպանության նպատակով, ընկերությունը պետք է տեղեկացնի համապատասխան պատասխանատու գերատեսչություններին, -աշխատանքներն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին՝ տարածքում հնարավոր գոյություն ունեցող որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար: - խախտված հողաշերտի հնարավորինս արագ վերականգնում՝ տարածքում կենդանական աշխարհի տեղաշարժը չխաթարելու նպատակով: - հնարավորինս նվազեցնել տարածքի գիշերային լուսավորությունը՝ կենդանիների որոշ տեսակների բնականոն վարքին չխանգարելու նպատակով: 		
----	------------------------------------	---	--	--

15. Մշտադիտարկման (մոնիթորինգի) միջոցառումներ

հհ	Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Մոնիթորինգի Վայրը	Իրականացման ձևը	Ժամանակամիջ ոց	Մոնիթորինգ Կատարող/ Վերահսկող
-----------	----------------------	------------------------------------	------------------------------	----------------------------	---------------------------	--

1	<p>Շինարարության ընթացքում օդային ավազան, ջրային և հողային ռեսուրսների մեջ վտանգավոր նյութերի և կեղտաջրերի ներթափանցման բացառելուն ուղղված</p>	<p>- Փոշու և այլ օդի աղտոտիչների (CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական չափաքանակների պարբերական վերահսկում:</p> <p>- Ջրային և հողային ռեսուրսների որակի ուսումնասիրությունների կատարում,</p> <p>- կեղտաջրերի հեռացման՝ քիմիկատների տեղադրում:</p>	<p>Գործունեության ենթակա տարածքում</p> <p>Գործունեության տարածքում</p>	<p>Ստուգայցեր, գործիքային ստուգումներ</p> <p>Տեսողական դիտարկումներ, մասնագետի կողմից ստուգայցեր:</p>	<p>Շինարարության փուլում՝ ամենօրյա:</p> <p>Փոշենստեցումը տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրը 2-3 անգամ</p> <p>Պարբերաբար</p>	<p>Կապալառու «ՎԻ-ԷՅՋ-ԷՍ» ՍՊԸ</p> <p>Համապատասխան վերահսկողական մարմիններ:</p>
2	<p>Արտակարգ իրավիճակներ և աշխատանքի անվտանգություն</p>	<p>- Աշխատողների իրազեկում՝ աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ընթացակարգի մասին,</p> <p>- շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն,</p>	<p>Գործունեության իրականացման ենթակա տարածքում</p>	<p>Իրազեկումներ և ստուգումներ</p> <p>Ստուգայցեր</p>	<p>Պարբերաբար</p> <p>ամենօրյա ռեժիմով,</p>	<p>Կապալառու «ՎԻ-ԷՅՋ-ԷՍ» ՍՊԸ»</p> <p>Համապատասխան գերատեսչություն</p>

		<p>-քնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության տեխնիկական վերահսկողություն՝</p> <p>-հակահրդեհային պահանջների ապահովում՝ ՀՀԾՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերին համապատասխան:</p> <p>Ամբողջ շինարարության ընթացքում վերահսկվելու են շինարարության որակի չափանիշները՝</p> <p>Աղմուկի և թրթռումների մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ:</p>	Շինհրապարակ Գործունեության իրականացման ենթակա տարածքում	Ստուգայցեր	Հաճախակի	<p>յունների տեսչական մարմիններ</p> <p>Տեխնիկական վերահսկողություն իրականացնող մարմին</p> <p>«ՎԻ-ԷՅՁ-ԷՍ» ՍՊԸ</p>
	<p>Շինարարական նորմերի պահպանում</p> <p>Աղմուկ, թրթռում</p>			Ստուգայցեր	ամիսը մեկ անգամ	
3	Նյութեր	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից:	Լիցենզավորված կազմակերպությունների պահեստներ	Մատակարարման ընթացքում	Շինարարության փուլում՝ պայմանագրերի առկայություն	Կապալառու «ՎԻ-ԷՅՁ-ԷՍ» ՍՊԸ

4	Թափոն	Թափոնների կանոնավոր տեղափոխում:	Գործունեության ենթակա տարածքից	համապատասխան պայմանագրերի հիման վրա տեղափոխում	Շինարարության ընթացքում	Կապալառու
5	Շինտեխնիկա և տրանսպորտային միջոցներ	<ul style="list-style-type: none"> - Շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում, - ամբարձիչի ժամանակի և բեռնունակության օգտագործում, - շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների վառելիքի լիցքավորման և յուղման իրականացում՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում: 	Շինհրապարակ շինհրապարակից դուրս՝	<ul style="list-style-type: none"> Սստուգայցեր Դիտողական ստուգումներ, Գործընթացի ստուգում՝ մեքենաների շահագործման ընթացքում 	<ul style="list-style-type: none"> Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում Պարբերաբար Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում 	Կապալառու
6	Կանաչապատում և բարեկարգում	<ul style="list-style-type: none"> Վերականգնել և բարեկարգել շրջակա տարածքը, - տարածքի կանաչապատման աշխատանքների և կանաչապատման ծրագրի համապատասխանության ուսումնասիրություն, - կանաչ զանգվածի վիճակի՝ 	Գործունեության տարածք	Դիտողական ուսումնասիրություն	Շինարարական աշխատանքների ավարտից հետո	Կապալառու Վերահսկողական մարմիններ «ՎԻ-ԷՅՋ-ԷՍ» ՍՊԸ,

		կայողականության ուսումնասիրություն և ծառերի ան ապահովվելու նպատակով մշտադիտարկում:				Համայնք
7	Կենսաբազմազանություն:	Գործունեության տարածքում շինարարական աշխատանքների կատարման ժամանակ ընկերության կողմից պարբերաբար կատարել մոնիթորինգ, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներից՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման և			Մինչև շինարարական աշխատանքներ սկսելը և շին աշխատանքների ընթացքում:	Կապալառու «ՎԻ-ԷՅՁ-ԷՍ» ՍՊԸ ,

		դրանց պահպանության նպատակով, ՀՀ Կարմիր գրքում գրանված կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման համար:				
